I

ՀԱՅՈՑ ՀԻՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔՆԵՐԸ*

ՔԱՂԱՔԱՄԱՅՐ ԱՐՏԱՇԱՏԸ ՊԱՏՄԱՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ

ԺՈՐԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ

«Այսպիսով, կառուցվեց մեծ ու շատ գեղեցիկ քաղաք, որը կոչվեց թագավորի անունով և հռչակվեց Հայաստանի մայրաքաղաք»[1]:

Մագնեսիայի ճակատամարտից հետո՝ մ. թ. ա. 189 թ., Մեծ Հայքում հայկական նոր անկախ պետության ստեղծումը Արտաշես I-ի (մ. թ. ա. 189-160 թթ.) գլխավորությամբ շրջադարձային եղավ հայ ժողովրդի պատմության համար: Արտաշեսը վերամիավորեց հայկական հողերի մեծ մասը (բացի Ծոփքից), անցկացրեց մի շարք բարեփոխումներ: Նրա կարևորագույն գործերից մեկը միավորված Հայաստանի նոր մայրաքաղաքի՝ Արտաշատի կառուցումն էր:

Արտաշատը գտնվում էր Արարատյան դաշտում՝ գեղատեսիլ Արարատի դիմաց, Արաքս և Մեծամոր գետերի միախառնումով ստեղծված թերակղզու 12 մեծ ու փոքր բլուրների վրա, միջազգային առևտրական ճանապարհների խաչմերուկում (աղ. II, 1): Այսինքն՝ տեղի ընտրությունը շատ հաջող էր կատարված թե՛ ստրատեգիական և թե տնտեսական առումով ու միանգամայն համապատասխանում էր այն բոլոր պահանջներին, որոնք, ըստ անտիկ հեղինակների, անհրաժեշտ էին քաղաքի կառուց-

* Այսու «Պատմա-բանասիրական հանդեսը» այս խորագրով բացում է նոր ենթաբաժին, ուր կամփոփվեն հայ հին մայրաքաղաքներին նվիրված մերօրյա պատմահնագիտական հետազոտության արդյունքները:

Արդ, ենթաբաժինը բացվում է Հին Հայաստանի Արտաշատ մայրաքաղաքի հնագիտական արշավախմբի ղեկավար, պատմական գիտ. թեկնածու, ԳԱԱ հնագիտության և ազգագրությանինստիտուտի Հին Հայաստանի հնագիտության բաժնի վարիչ, առաջատար գիտաշխատող Ժորես Խաչատրյանի ուսումնասիրությամբ (խմբ.)

[1] Плутарх Лукулл. XXXI.5, Сравнительные жизнеописания в трех томах. Т. II (пер. С.С. Аверинцева), М., 1963.

ման համար[2]:

Բարենպաստ պայմանների շնորհիվ Արտաշատը բուռն վերելք ապրեց և շուտով դարձավ ոչ միայն Հայաստանի վարչական, քաղաքական, կրոնական, տնտեսական ու մշակութային խոշոր կենտրոնը, այլև անտիկ աշխարհի մեծ ու նշանավոր քաղաքներից մեկը: Ստրաբոնն ասում է. «Այս վերջինը գեղեցիկ է շինված և երկրի թագավորանիստ քաղաքն է: Նա գտնվում է գետաձոցում, որը նման է թերակղզու և նրա շուրջը, բացի պարանոցի մասից՝ գետի առջև ձգվում է պարիսպը, իսկ պարանոցը փակված է խրամով ու պատվարով»[3]: Ստրաբոնը և Պլուտարքոսը վկայում են նաև, որ Արտաշատի տեղը ընտրել ու հատակագիծը կազմել է Կարթագենի հռչակավոր զորավար Հաննիբալը: Մենք հակված ենք ընդունելու այն հեղինակների կարծիքը[4], որոնք համոզված են այս հարցում վերոհիշյալ աղբյուրների անաչառությանը և համարում են որ Հաննիբալը Մագնեսիայի ճակատամարտից հետո, կարճ ժամանակով, կարող էր ապաստանել Արտաշեսի արքունիքում և շատ հարցերում խորհրդատու լինել նրան, ինչպես մինչ այդ Անտիոքոս III-ին:

Արտաշատի կառուցման ժամանակի վերաբերյալ տարբեր կարծիքներ կան: Կարծում ենք, Արտաշատի հիմնադրման ամենահավանական ժամանակը կարելի է համարել մ. թ. ա. 189/188 թթ.[5]:

Արտաշատի հիմնադրման մասին պատմում է նաև Մովսես Խորենացին. «Երթեալ Արտաշիսի ի տեղին, ուր խառնին Երասխ և Մեծամօր և հաճեալ ընդ բլուրն՝ շինէ քաղաք յիւր անուն անուանեալ Արտաշատ: Զեռնտու լինի նմա և Երասխ փայտիւք մայրեաց. վասն որոյ անաշխատ և երագ շինեալ՝ կանգնէ ի նմա մեհեան, և փոխէ ի նա ի Բագարանէ զպատկերն Արտեմիդեայ և զամենայն կուռս հայրենիս, բայց զԱպողոնի պատկերն արտաքոյ քաղաքին կանգնէ հուպ ի ճանապարհն: Եւ յարուցանէ ի քաղա-քէն Երուանդայ զգերութիւն Հրէիցն, որ վայելչութիւն քաղաքին Երուանդայ, զոր տարեալ էր յԱրմաւրայ և զոր անդէն արարեալ նորա՝ փոխէ յԱրտաշատ. և առաւել ևս յինքեանէ յօրինէ իբրև զքաղաք արքայանիստ»[6]: Այս բոլորից հետևում է, որ Ար-

---

[2] Архитектура античного мира, М., 1940, с. 33; В и т р у в и й. Десять книг об архитектуре. Т. 1 (пер.Ф. А. Петровского). М., 1936, с. 32-33; *М о в с е с Խ о р е н а ц ի. Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը և ներածությունը Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի (այսուհետև՝ Մովսես Խ о р е н а ц ի), Երևան, 1991, I, ԺԶ, II, ԼԹ, III, ԾԹ, Ժ. Դ. Խ а չ а т р յ а н. Հայաստանի անտիկ շրջանի քաղաքներն ու քաղաքաշինությունն ըստ Մովսես Խորենացու «Հայոց պատմության».– ՊԲՀ, 1998, № 1-2, էջ 179-188:*

[3] С т р а б о н. География в 17 книгах, X1, 14, 6 (пер. и комментарии Г. А. Стратановского). Л., 1964.

[4] И. Ш. Ш и ф м а н. Ганнибал в Армении. – ИФЖ, 1980, № 4, с. 257–261. *Արմեն Խաչիկյանը «Հաննիբալը Արևելքում և Հայաստանում» հոդվածում» (ՊԲՀ, 2006, -1), խոսելով Հաննիբալի՝ Հայաստանում գտնվելու մասին գրում է. «Այսպիսով, ճշտվում է նաև Արտաշատի հիմնադրման թվականը՝ մ. թ. ա. 189 թ. (նույն տեղում, էջ 236): Հեղինակը, թերևս, ծանոթ չէ մեր՝ ավելի վաղ տպագրած հոդվածներին, մասնավորապես «Հայաստանի անտիկ շրջանի քաղաքներն ու քաղաքաշինությունն ըստ Մովսես Խորենացու «Հայոց Պատմության» հոդվածին, (ՊԲՀ, 1998, -1–2, էջ 179), ուր արդեն արտահայտված է եղել այդ կարծիքը (նույն տեղում, էջ 181, ծան. 5):*

[5] *Ժ. Դ. Խ а չ а т р յ а н. Հայաստանի անտիկ շրջանի քաղաքներն ու քաղաքաշինությունը…, էջ 181-188, ծան. 5:*

[6] *М о в с е с Խ о р е н а ц ի, II, ԽԹ:*

տաշատը կառուցվել է նախապես մտածված միասնական պլանով, թագավորի կամքով ու ցուցումով: Այն բնակեցվել է «սինոյկիզմոսի» (համաբնակեցման) եղանակով[7], որը հելլենիստական նորաստեղծ քաղաքների բնակեցման ընդունված ձև էր: Արտաշատը դար-ձավ նաև Հայաստանի պաշտամունքային կարևորագույն կենտրոնը: Արտաշեսը քաղաքում տաճար կառուցեց (VI բլրի[8] վրա, բարձր. 50 մ.) և Բագարանից այնտեղ տեղափոխեց Լուսին–Անահիտ–Արտեմիսի արձանը և բոլոր հայրենական կուռքերը, իսկ Արեգ–Ապոլոն–Միհրի արձանը, իբրև առնտրի աստված Հերմես, կանգնեցրեց քաղաքից դուրս, բայց ոչ հեռու, ճանապարհի մոտ: Անահիտը Հայաստան աշխարհի և Արտաշատի, իսկ Միհրը՝ Արտաշիսյան, այնուհետև Արշակունի թագավորների հովանավոր աստվածն էր:

1970 թ. սկսված պեղումները հարուստ ու բազմատեսակ նյութեր տվեցին՝ բացահայտելով քաղաքի բազմակողմանի զարգացած մշակույթը: Պարզվեց, որ Արտաշատի բլուրները բնակեցված են եղել դեռևս վաղ երկրագործական շրջանում[9]: Այդ են վկայում VII և VIII բլուրներում հայտնաբերված մ. թ. ա. V–IV հազարամյակի բնավայրի հետքերը:

Միանգամայն անակնկալ էր անտիկ Արտաշատի տարածքում ուրարտական քաղաքի հայտնաբերումը, որը մինչ այդ անհայտ էր գիտությանը: Ուրարտական քաղաքը, որի միջնաբերդը գտնվել է II բլրի վրա (որն ամենաբարձրն է՝ 70 մ), զբաղեցնում է հսկայական տարածք: Միջնաբերդի պարիսպները, որոնք մասամբ բացվել են (400 մ), տեղ-տեղ պահպանվել են 5–6 մ բարձրությամբ (լայն. 2,7 մ), արտաքինից ունեն ընդհանուր գծից 1 մ առաջ դրված գրեթե հավասար՝ 5,5-6,5 մ հեռավորությամբ կառուցված, ուղղանկյուն՝ 5,5-6,5 մ լայնությամբ որմնահեցեր: Պարսպի հիմնախարսխային մասն անմշակ քարերից է՝ ամրացված կավի շաղախով, որը վերևից ծածկված է մոտ 50 սմ կավե միջնաշերտով: Նրա վրա բարձրանում է հում աղյուսի (51,8 x 51,8 x 14 և 51,8 x 35 x 14 սմ) կանոնավոր շարքը: Աղյուսների չափերը համապատասխանում են Կարմիր բլուրի (Թեյշեբաինի) ամրոցի և ուրարտական այլ հուշարձանների աղյուսների չափերին, որի հիմքում ընկած է ուրարտական արմունկի չափը[10] (51,8 սմ): Կոնտրֆորսների աղյուսաշար մասի անկյունները եռատամ, 30 սանտիմետրանոց անցումներ ունեն, իսկ կոնտրֆորսները (լայն. 1 մ, խոր. 30 սմ) ու դրանց միջև ընկած պատերի հատվածները (լայն. 1,7 մ, խոր. 60 սմ)՝ կենտրոնական մասերում նույնանման անցումներով ձևավորված խորշեր (աղ. IV, 1-4): Աստիճանաձև անցումներով և խորշերով մշակված ճակատները բնորոշ էին Միջագետքի ճարտարապետությանը[11], որը, սակայն, իր զարգացմանը հասավ ուրարտական ճարտարապետության մեջ: Պերսեպոլսի գանձարանի պատերի խորշերի հետ զուգակցված

---

[7] *Հայ ժողովրդի պատմություն* (*այսուհետև՝ ՀԺՊ*), *հ. 1, Երևան, 1971, էջ 528-551:*

[8] *Բլուրների համարակալումը Արտաշատի հնագիտական արշավախմբինն է:*

[9] *Ժ. Դ. Խ ա չ ա տ ր յ ա ն. Արտաշատի VII բլրի 1973-1975 թթ. պեղումների արդյունքները.– ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների» (այսուհետև՝ ԼՀԳ), 1978, -8, էջ 71, տախտ. IV:*

[10] Б. Б. П и о т р о в с к и й. Ванское царство (Урарту). М., 1959, с. 205.

[11] Всеобщая история архитектуры в 12 томах (*այսուհետև՝* ВИА), т. 1, М., 1970, с. 198-211, рис. 8, 15, 16, 18, 20; с. 220, рис. 34, 35.

կոնտրֆորսներն[12] ուղղակի աղերսվում են Արտաշատի ուրարտական պարիսպների հետ: Այս և մյուս շինությունների դռների աստիճանաձև բացվածքները մի անգամ ևս վկայում են, որ Ուրարտուն եղել է Աքեմենյան Պարսկաստանի ճարտարապետության ձևավորման ակունքներից մեկը[13]:

Ուրարտական քաղաքը տարածված է եղել Խոր Վիրապի բլուրներից արևելք՝ մինչև Լուսառատ գյուղը: Շատ հնարավոր է, որ այս մեծ քաղաքը եղել է ուրարտացիների առաջին հենարաններից մեկը Արաքսի ձախ ափին[14]:

Արտաշատի պեղումները նոր փուլ հանդիսացան Հայաստանի հելլենիստական և ուշ անտիկ շրջանի պատմության ու մշակույթի ուսումնասիրության համար: Հնարավորություն ստեղծվեց ճշգրտում մտցնել հոգևոր ու նյութական մշակույթի պատմության մինչ այժմ ընդունված[15], այն է՝ մ. թ. ա. VI–IV դդ. (հին հայկական, Աքեմենյան շրջան), մ. թ. ա. III–I դդ. (հելլենիստական շրջան), և մ. թ. I–III դդ. պարբերացման մեջ: Վերջին՝ երրորդ փուլը կարելի է անվանել ուշ անտիկ շրջան, ինչպես ընդունված է հին աշխարհի մյուս երկրների նյութական մշակույթի պարբերացման մեջ, նրան ավելացնելով մ. թ. IV դ. (I–IV դդ.): Քանի որ Հայաստանում, նույնպես, շարունակում էին գոյատևել քաղաքները և դեռևս բոլոր բնագավառներում շատ ուժեղ էին անտիկ ավանդույթները[16]:

Արտաշատի պեղումների շնորհիվ հնարավոր եղավ ուսումնասիրել Հայաստանի անտիկ շրջանի քաղաքաշինությունը: Առաջին հերթին անհրաժեշտ էր որոշել քաղաքի տեղադրությունը, սահմանները, որը կարևոր նշանակություն ունի նման հետազոտության համար: Թեև Ստրաբոնի[17], Կորնելիոս Տակիտոսի[18], Մովսես Խորենացու[19] և այլ հեղինակների վկայությունները հուշում են Արտաշատի գտնվելու վայրը, սակայն երկար ժամանակ այն անորոշ է եղել: Արտահայտվել են տարբեր կարծիքներ[20]:

Պեղումներով պարզվեց, որ քաղաքն ավելի մեծ է, քան ենթադրվում էր: Արտաշատը զբաղեցրել է Խոր Վիրապի տասը բլուրները (բարձր. 20–70 մ), դրանց հարող հարթավայրի հարավային և հարավարևելյան հատվածները, որտեղ կա ևս երկու բարձր ու մեծ բլուր (XI և XII, բարձր. մոտ 50 մ): Դրանք, սակայն, քաղաքի պարիսպների ընդհանուր համակարգի մեջ չեն մտել:

---

[12] E. E. S c h m i d t. Persepolis, I. Chicago, 1953, Fig. 65-68, 73, 74 *և այլուր:*

[13] К. Л. О г а н е с я н. Кармир блур, IV, Архитектура Тейшебаини. Ереван, 1955, с. 71, 98; К. Л. О г а н е с я н. Арин-берд, I, Архитектура Эребуни. Ереван, 1961, с. 88.

[14] *Գրականությունը տե՛ս Ժ. Դ. Խ ա չ ա տ ր յ ա ն. Հայաստանի անտիկ շրջանի պաշտպանական կառույցները.– ՊԲՀ, 1987, № 4, էջ 162-163:*

[15] Г. А. Т и р а ц я н. Опыт периодизации истории материальной культуры древней Армении.– “Известия общественных наук”, АН АрмССР, 1957, № 2, с. 77-90.

[16] Ž. D. K h a c h a t r i a n. Artaxata Capitale dell' Armenia Antica (II sec A.C. – IV sec. D.C), Ai Piedi dell' Ararat, Artaxata, E I'Armenia Ellenistico-Romana, a cura di Antonio Invernizzi. Torino, 1998, p. 99.

[17] S t r a b o, XI, 14, 6.

[18] C o r n e l i u s T a c i t u s. Annales, XIII, 39.

[19] *Մ ո վ ս ե ս Խ ո ր ե ն ա ց ի, II, ԽԹ:*

[20] *Ժ. Խ ա չ ա տ ր յ ա ն. Հին Արտաշատի տեղադրության հարցի շուրջ.– Հին Հայաստանի պատմության և մշակույթի հարցեր, Երևան, 2001, էջ 42-48:*

Հետախուզական աշխատանքները հնարավորություն ընձեռեցին պարզել Խոր Վիրապի արևելյան լանջերով անցնող Մեծամոր գետի հունը: Փոքր Վեղի գյուղի տարածքի հողերի ռելիեֆը, դեպի բլուրներն ու Արաքսը, յուրաքանչյուր հինգ մետր մեկ մետրով իջնում է: Մեծամորը, հյուսիսային կողմից մոտենալով Խոր Վիրապի բլուրներին, I բլրի արևելյան եզրից և դրա դիմաց գտնվող բավականին մեծ բլրի (XIII) միջով անցնելով, բլուրների փեշերով հասել է II բլրի հարավարևելյան մասը, որտեղ փռվելով, ներկայիս գերեզմանոցի միջով գնացել է մինչև VI բլուր, վերջինիս և ուշ միջնադարյան գերեզմաններով բլրի մոտով անցել է դեպի X բլրի հյուսիսային կողմը, այստեղ լայնորեն փռվելով հոսել է հարավ–արևելք և նախքան հարավ թեքվող ոլորանին հասնելը, 2-3 հարյուր մետր այս կողմ, միացել է Արաքսին: XI–XII բլուրներից հարավ ընկած տարածքը ճահճահողեր են և մշակութային ոչ մի հետք չկա: Այն ի հայտ է գալիս Արաքսից 1–1,5 կմ հեռավորության վրա, որտեղ մեկ մետր խորությունից գտնվեց անտիկ խեցեղեն և հեծյալի կավե արձանիկ:

Այդպիսով, հարթավայրում ստացվել է եռանկյունաձև մի թերակղզի, որը արևմտյան կողմում փակվում է բլուրներով: Բլուրներից արևմուտք գտնվող հարթավայրում բնակության ոչ մի հետք չկա: Բլուրների արևմտյան լանջով է անցել (Տափերական և Մեծամորի կամրջով) «Արքունի պողոտայ»-ի Տիգրանակերտ–Արտաշատ հատվածը և դրա եզրով Արտաշեսի կառուցած Արաքս և Մեծամոր գետերը միացնող ջրանցքը (աղ. II, 1): Արևմտյան մասում III և IV բլուրների դիմաց, բլրակների վրա, գտնվում է քաղաքի դամբարանադաշտերից մեկը:

Արտաշատի հարավային սահմանը Արաքսն է, ինչպես վկայում են նաև Ստրաբոնը[21] և Տակիտոսը[22], արևելյան և հարավ արևելյան սահմանները՝ Մեծամոր գետն է: Քաղաքի արևելյան սահմանները չեն հասել Նոր կյանքի դաշտերին, իսկ հյուսիսայինը՝ Փոքր Վեղի գյուղին, ինչպես ենթադրվել է[23]: Տիգրան II-ը հելլենիստական երկրներից գաղթեցված բնակչության մի մասին բնակեցրեց Արտաշատում: Եվ արդեն մ. թ. ա. I դ. երկրորդ կեսին քաղաքն զբաղեցրել է Մեծամոր և Արաքս գետերի միջև եղած ամբողջ եռանկյունին (մոտ 400 հա): Այդ շրջանում քաղաքը դուրս է եկել պարիսպներից: Բնակվել են նաև II բլրի արևմտյան լանջին, ճանապարհի հարևանությամբ, V բլրի հյուսիսային լանջին: Հարթավայրային մասում, գրունտային ջրերի պատճառով, բնակարանները կառուցվել են ցածր բլուրների ու թմբերի վրա: Դժբախտաբար, դրանք 1960-ական թվականներից սկսած հարթեցվել են, ուստի դժվար է ճիշտ պատկերը ներկայացնել: Բավական ընդարձակ մակերես ունի I բլրի արևելյան կողմում գտնվող բլրակը (XIII), որը խիտ բնակեցված է եղել: Խոր Վիրապ տանող ճանապարհն այսօր անցնում է մի մեծ թաղամասի վրայով (A և B համալիրներ): Մեծ աղյուսաշեն համալիր է բացվել նույն ճանապարհի հարավային եզրին, որը հարդարված է եղել որմնանկարներով և ծածկված կոմինդրներով (մ. թ. I դ.): Բնակարան

[21] S t r a b o, XI, 14, 6.

[22] C o r n e l i u s T a c i t u s. Annales, XIII, 39.

[23] *Տե՛ս* Б. Н. А р а к е л я н. Арташат, I (Основные результаты раскопок), 1970-1977 гг. Ереван, 1982, с. 20; Г. А. Т и р а ц я н. Культура древней Армении VI в. до н. э.– III в. н. э. (по археологическим данным). Ереван, 1988, с. 94.

է բացվել Լուսառատ գյուղի հյուսիսային ծայրին (մ. թ. I դ.) և այլն: Այսինքն, պարիսպներից դուրս այս տեղամասում, քաղաքը հասել է Խոր Վիրապի ճանապարհին, որովհետև ճանապարհից հյուսիս բացվել են միայն առանձին դամբարաններ: Իր ծաղկման շրջանում՝ մ. թ. I–II դդ. Տրդատ I-ի կողմից քաղաքի վերականգնումից հետո, Արտաշատն իր գերեզմանոցներով զբաղեցրել է մոտ 500 հա տարածություն: Ի նկատի ունենալով անտիկ քաղաքների բնակչության միջին խտությունը[24], կարելի է ասել, որ Արտաշատն ունեցել է 150 հազարից ավելի բնակչություն: Իր տարածքով և բնակչության թվով, հելլենիստական քաղաքների հետ համեմատած, Արտաշատը հին Արևելքի խոշոր քաղաքներից ***մեկն էր****:*

Արտաշատը մի քանի անգամ ավերվել է ու վերակառուցվել: Այն ունի հինգ շինարարական շրջան[25]: I) քաղաքի հիմնադրումից՝ մ. թ. ա. 189/188 թթ. մինչև մ. թ. ա. 66 թ.՝ Տիգրան Կրտսերի ղեկավարությամբ պարթևական զորքերի կողմից կատարված ավերածությունը: Մեզ քիչ հավանական է թվում դա կապել մ. թ. ա II դ. վերջերին տեղի ունեցած հայ-պարթևական պատերազմի հետ, երբ պատանդ վերցվեց թագաժառանգ Տիգրանը կամ, առավել ևս, պայմանավորել Անտոնիոսի՝ Արտավազդին խաբեությամբ գերելու ժամանակով (մ. թ. ա 34 թ.) թվագրելը[26]: II) մ. թ. ա. 66 թ. մինչև 59 թ.՝ Կորբուլոնի կողմից քաղաքի ավերումը: III) մ. թ. 60-ական թվականներից, երբ Հռոմից վերադառնալուց հետո Տրդատ I-ը կառուցեց ավերված քաղաքը, մինչև 163 թ. Ստատիոս Պրիսկոսի կողմից քաղաքի մասնակի ավերումը: IV) 170-ական թվականներից մինչև 335 թ. քաղաքի մասնակի ավերումը մասքութերի թագավոր Սանեսանի կողմից: V)336 թ. մինչև 368–369 թթ.՝ քաղաքի ավերումը Շապուհ II-ի կողմից և բնակչության գերեվարումը: «Եւ զամենայն շինուած քաղաքին հրձիգ արար զփայտակերտն, և զքարակերտն քանդեցին. զպարիսպն ըստ նմին օրինակի և զամենայն շինուած քաղաքին մինչև ի հիմունսն ապականեցին, և ոչ թողին մի, և ոչ թողին բնաւ քար ի քարի վերայ. անմարդի և թափուր յամենայն բնակչաց իւրոյ կացուցանէին»[27]: Դրանից հետո Արտաշատում կյանքը շարունակվում է VI բլրի վրա, որտեղ գտնվում էր եկեղեցին, և դրանից հարավ ու արևմուտք ընկած հարթավայրում[28] և Արաքսի ափին գտնվող բլրակի մերձակայքում: Այն ավանդաբար շարունակում է կատարել նաև առևտրական կենտրոնի դերը: Միանգամայն հետաքրքիր պատկեր է ներկա-

---

[24] С. Д. К р ы ж и ц к и й. К вопросу об определении количества населения в греческом эллинистическом городе.– Материалы III Всесоюзного симпозиума по древней истории Причерноморья на тему “Эллинизм и Причерноморье”, V. Цхалтубо, 1982, Тезисы докладов и сообщений [Тбилиси], 1982, с. 47-49.

[25] *Ժ. Դ. Խ ա չ ա տ ր յ ա ն, Ա. Գ. Կ ա ն ե գ յ ա ն. Արտաշատի VIII բլրի շերտագրությունը.– ԼՀԳ, 1974, № 9, էջ 76, 91, Ժ. Դ. Խ ա չ ա տ ր յ ա ն. Արտաշատի VII բլրի 1973-1975 թթ. պեղումների արդյունքները.– ԼՀԳ, 1978, -8, էջ 56, 57, ծան. 1,* Ž o r e s D. K h a c h a t r i a n. Artaxata Capitale…, p. 101.

[26] Б. Н. А р а к е л я н. Арташат, I, с. 24.

[27] *Փավստոս Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց, Երևան, 1987, IV, 55:*

[28] *Ժ. Խ ա չ ա տ ր յ ա ն. Արտաշատը հայոց դարձի նախօրեին և հետո.– «Էջմիածին», 2002, Ժ, էջ 54-67:*

յացնում քաղաքի տերիտորիալ բաժանումն ըստ նշանակության՝ պալատական-վարչական, պաշտամունքային, արհեստավորաառևտրական, ռազմապաշտպանական և այլն, և ըստ բնակչության սոցիալական կազմի ու իրավական վիճակի[29]: II բլրի վրա, որն ունի օգտագործելի ամենամեծ մակերեսը, քաղաքի միջնաբերդն է, որտեղ տեղավորված են պալատական վարչական համալիրները, ավագանու բնակարանները, զորանոցները, զինանոցները: Այն, ճիշտ է, գտնվում է ընդհանուր համակարգի մեջ, բայց իր երկու հզոր պարիսպներով լավ պաշտպանված, անառիկ դիրք ունի, և ոչ միայն հուսալի հենարան է արտաքին թշնամու դեմ, այլև տիրող դասի իշխանության համար, ընդդեմ քաղաքի շահագործվող բնակչության: Բլրի գագաթին պահպանվել է ոչ մեծ քարերով ու կրաշաղախով ամրացված մի հարթակ, որի վրա կառուցված է եղել պալատական համալիրը: Հարթակի մակերեսը 2750 քմ (25x30մ) է: Այն պատրաստվել է Տրդատ I-ի ժամանակ: Դա Հայաստանում շինարարության մեջ կրաշաղախի օգտագործման ամենահին օրինակներից մեկն է: Հարթակը մոտ 5մ բարձր է բլրի մակերեսից և, հավանաբար, խուլ պատերով առանձնացված է եղել: Այն համարվել է վաղ միջնադարյան ամրոց[30], սակայն ոչ մի շինություն կամ վաղ միջնադարյան նյութական մշակույթի մնացորդ II բլրի վրա, ընդհանրապես, գոյություն չունի: Շապուհ II-ի կողմից քաղաքն ավերելուց հետո այս բլրի վրա կյանքը չի շարունակվել[31]:

Մայրաքաղաքները նաև կրոնական գլխավոր կենտրոններ էին: Արտաշատի պաշտամունքային կենտրոնը VI բլուրն էր (բարձ. 50 մ), որի վրա կառուցվել է Հայաստան աշխարհի և Արտաշատի հովանավոր Անահիտի և թագավորի նախնիներին նվիրված տաճարը: Իսկ Արտաշիսյան դինաստիայի հովանավոր Արեգ – Միհր – Ապոլոն – Հերմես – Տիրի տաճարը կառուցվել է (կանգնեցվել է) քաղաքից դուրս՝ ճանապարհին, Արտաշատի հյուսիսարևմտյան մասում, Արաքսի ձախ ափին գտնվող բլրակի վրա, իբրև առևտրի աստված (Հերմես): Այստեղով՝ Տափերական կամրջով էր անցնում դեպի հարավ («արքայական ճանապարհ»), արևմուտք և արևելք տանող ճանապարհը:

Ագաթանգեղոսի հաղորդումը վկայակոչելով, որ երբ Գրիգոր Լուսավորիչը Եկեղյաց գավառի Երիզա ավանում հրաժարվում է Անահիտ դիցուհու բագինին պսակներ ու ծառերի թավ ճյուղեր դնել, Տրդատը հրամայում է կապել Գրիգորի ձեռքերն ու ոտքերը և տանել «...Այրարատ գաւառ, և տալ զնա ի դղեակ բերդին Արտաշատ քաղաքի, և իջուցանել ի վիրապն ներքին, որ անհնարին էր խորությամբ, մինչև անդէն մեռցի»[32]: Որոշ գիտնականներ VI բլուրն են համարում միջնաբերդը, և այնտեղ տեղադ-

---

[29] Ж. Д. Х а ч а т р я н, А. В. Т о н и к я н. Градостроительные аспекты древнего Арташата.– “Архитектурное наследство”, № 37. М., 1990, с. 29.

[30] Б. А р а к е л я н. Арташат, I, с. 27

[31] *Ժ. Խ ա չ ա տ ր յ ա ն, Գուշակության արվեստի և դրա ժառանգականության հարցի շուրջ (մ. թ. ա. III դ. – մ. թ. IV դ.).– «Իրան նամե», 1996, № 4–5, էջ 46–48:*

[32] *Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց (քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ս. Կանայանցի, աշխ. թարգմ. և ծան. Ա. Տեր-Ղևոնդյանի), Երևան, 1983, § 122:*

ռում արքայական պալատական շենքերը[33]: Մինչդեռ Ագաթանգեղոսի վերոհիշյալ վկայությունը շատ անորոշ է և հիմք չի տալիս նման եզրակացության: Առասպելի ստեղծման ժամանակաշրջանում միայն VI բլրի վրա էր կյանքը շարունակվում, մնացած բլուրներն ավերված էին, ուստի չէին կարող իմանալ թագավորական պալատի գտնվելու վայրը: VI բլրի վրա պետք է լիներ նաև դեռևս քրմերի համար կառուցված բնակելի համալիրը (պալատ):

Գրիգոր Լուսավորիչն անարգել էր մայր աստվածուհի Անահիտին: Նա կրոնական հանցագործ էր, ուստի նրան պետք է «բանտարկեին» Անահիտի տաճարի մոտ գտնվող բանտում: Հայաստանում բանտեր շատ կային: Այդ շրջանին է վերաբերում Հովհան Մամիկոնյանի վկայությունները բանտերի մասին[34]: Գրիգոր Լուսավորիչը հենց Խոր Վիրապից պետք է դուրս գար հաղթանակած, որը խորհրդանշելու էր նոր կրոնի հաղթանակը հեթանոսության նկատմամբ: Հայտնի է, որ պաշտամունքային վայրերը չեն փոխվում. այստեղ է գտնվում Խոր Վիրապը: Ըստ Ագաթանգեղոսի, Գրիգոր Լուսավորիչը ավերված հեթանոսական տաճարների տեղում, այդ թվում նաև Արտաշատում, խաչեր կանգնեցրեց, որին պետք է պաշտեին կուռքերի փոխարեն, իսկ հետո այդ վայրերում կառուցեց եկեղեցիներ. «... զյառաջագոյն դրոշմեալն իւր, և կանգնեաց անդ զեկեղեցին Քրիստոսի: Սոյնպէս և ի տեղիս մեհենացն զոր կործանեաց յառաջագոյն. սոյնպէս և յԱրտաշատ քաղաքի և յամենայն տեղիս...»[35]:

Խոր Վիրապը հայերի երկրորդ սրբությունն է, ուխտագնացության վայրը: Այստեղ XII–XIII դդ. եղել է բարձրագույն դպրոց Վարդան Արևելցու ղեկավարությամբ: Մատենադարանում պահվում է Խոր Վիրապում գրված 12 ձեռագիր:

Արեգ–Միհր–Ապոլոն–Հերմես–Տիրի տաճարում պատգամատուն է եղել, որտեղ գուշակություններ և երազահանություն են կատարել[36]: Այստեղ բացվել է առաջին հարթակի (մ. թ. ա. II դ.) հյուսիսային պատի 28,30 մ հատվածը և արևելյան պատի 10,30 մ հատվածը: Այն կառուցված է կրաքարե վեմերով, մի շարքից բաղկացած չոր շարվածքով: Քարերն իրար հետ ամրացվել են միայն հորիզոնական, ծիծեռնակապոչ փորվածքների մեջ տեղադրված փայտերով: Քարերն ունեն ռուստիկում մշակում, որը տարբերվում է մինչհելլենիստականից (Աղ. VI, 3): Այդ ձևով մշակված քարերով շարվածքը պատին հաղորդում էր հոծության, վիթխարի տեսք, իսկ լույս ու ստվերի խաղը գեղատեսիլ տպավորություն էր թողնում: Հելլենիստական շրջանի տաճարը և հարթակը, հավանաբար, 59 թ. ավերվել է Կորբուլոնի կողմից[37]:

Տրդատ I-ի օրոք (63–88 թթ.) կառուցվել է նոր հարթակ, նոր տաճարով: Ապոլլոնը

---

[33] Г. А. Т и р а ц я н. Культура древней Армении, с. 92-93; *Հ. Հ. Հ ա կ ո բ յ ա ն.* Ai Piedi dell' Ararat Artaxata E l'Armenia Ellenistico-Romana.– “Studi E Materiali Di Archeologia”, 10, Torino, 1996, XXIX + 165 p., 95 III (Amina G. Kanetsian, Zores D. Khachatrian).– *ՊԲՀ, 1998, № 3, էջ 221:*

[34] *Հ ո վ հ ա ն Մ ա մ ի կ ո ն յ ա ն. Տարոնի պատմություն (թարգմ. ներած. և ծանոթ. Վ. Վարդանյանի), Երևան, 1989 , էջ 28, 46:*

[35] *Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, § 841:*

[36] *Մ ո վ ս ե ս Խ ո ր ե ն ա ց ի, II, ՀԶ:*

[37] Античная цивилизация. М., 1973, с. 40; *Ժ. Խ ա չ ա տ ր յ ա ն. Մոնումենտալ կառույցի մնացորդներ և ուշագրավ ծեսով թաղում Արտաշատից.– ՊԲՀ, 2005, № 2, էջ 226, նկ. 3-5:*

համադրվում է նաև Տիրի հետ: Հարթակի հյուսիսային պատը կտրել անցել է հելլենիստական հարթակի արևելյան պատի վրայով: Բացվել է երկրորդ հարթակի հյուսիսային պատի 10,60 մ հատվածը, արևելյան պատի 36,30 մ հատվածը (աղ. VI, 1, XII, 4): Հարթակի մուտքն արևելյան կողմից է: Հյուսիսարևելյան անկյունից 16,25 մ - հեռավորության վրա, բացվել է պատին կից, սրբատաշ կրաքարերով կառուցված աշտարակաձև մի շինություն, իսկ դրա արևելյան կողմում (երկ. 4,80 մ, լայն. 1,80 մ) վեց աստիճան (աղ. VI, 1, 2): Այսինքն՝ կրաքարե աստիճաններով բարձրացել են դեպի վեր և աշտարակի վրայով մտել տաճարական համալիրի բակ: Աստիճանների չափերի հիման վրա կատարված վերակազմությունը թույլ է տալիս որոշել հրապարակի այդ հատվածի բարձրությունը: Մինչև աշտարակի մուտքը 23 աստիճան է, ընդհանուր բարձրությունը՝ 5,50 մ:

I բլուրն ունի պաշտպանական նշանակություն: Այստեղ բացվել են զորանոցային տիպի շինություններ, դարբնի, զինագործի և այլ արհեստանոցներ (աղ. III, 2), հայտնաբերվել են մի քանի հազար նետասլաքներ: III և IV բլուրները մտնում էին պաշտպանական ընդհանուր համակարգի մեջ և ապահովում III բլրի կապը V բլրի ու քաղաքի մյուս թաղամասերի հետ:

V բլուրը բնակության համար շատ հարմար է: Այստեղ նկատելի են մեծ վառարանների հետքեր: Պեղումների արդյունքում բացվել են բնակելի տներ, դարպասի դիմաց՝ մասնավոր արխիվի մնացորդներ[38]: Հնարավոր է, որ այստեղ է եղել մաքսատունը և հրապարակ-շուկաներից մեկը: VII–VIII բլուրների վրա նույնպես ապրել են միջին խավի ներկայացուցիչներ, արհեստավորներ ու շարքային քաղաքացիներ (աղ. III, 1):

Քաղաքի կառուցվածքի կարևորագույն տարրերից մեկը պաշտպանական համակարգն է: Ըստ Ստրաբոնի և Կորնելիոս Տակիտոսի՝ Արտաշատն ունեցել է երկարաձիգ պարիսպներ: Պեղումներով բացվել և հետազոտվել է պարիսպների մի մասը մոտ 4500–5000 մ երկարությամբ[39]: Արտաշատի պարիսպների երկարությունը 10 000 մ-ից ավելի է (աղ. II, 1): Բոլոր բլուրները մտնում են պաշտպանական ընդհանուր համակարգի մեջ: Միջնաբերդն ընդհանուրից բացի ունի առանձին պարիսպ՝ դաշտի համեմատ 50-55 մ բարձրության: Դա ուրարտական պարիսպն է, որը վերականգնվել ու հարմարեցվել է հելլենիստական ռազմարվեստի պահանջներին, անկյունային կոնտրֆորսները փոխարինվել են կլոր աշտարակներով (տրամագիծը՝ 13–15 մ), իսկ մուտքն իջեցվել է դեպի I բլուր տանող լանջը և թևերից պաշտպանվել երկու աշտարակով (տրամագիծը՝ 13 մ, աղ. IV, 4):

Արտաշատի պարիսպների ներքին շարքը բլուրների հատվածում անցնում է 20–25 մ բարձրության վրա: Մեծ վարպետությամբ օգտագործելով տեղանքի ընձեռած հնարավորությունները՝ պարիսպները կառուցվել են բեկված գծերի ձևով, ինչպես Միլետի, Էփեսոսի, Պերգամոնի, Պրիենայի, Մեանդրի վրայի Մագնեզիայի, Նոտիու-

[38] Ž. D. K h a c h a t r i a n. The Archives of Sealings Found at Artashat (Artaxata).– "Bulletin de correspondance Hellenique", Supplement 29, Paris, 1996, p. 365-370, pl. 73-76.

[39] *Ժ. Դ. Խ ա չ ա տ ր յ ա ն. Հայաստանի անտիկ շրջանի պաշտպանական կառույցները.– ՊԲՀ, 1987, № 4, էջ 167-168, նկ. 1:*

մի, Դուրա-Եվրոպոսի հելլենիստական շրջանի պարիսպները, որոնք կատարում էին աշտարակների դեր:

Արտաշատի պարիսպներն ուժեղացված են անկյուններում և խոցելի տեղերում կառուցված 9–15 մ տրամագիծ ունեցող շրջանաձև հզոր աշտարակներով, որոնք պարիսպների արտաքին կողմից 2–5 մ առաջ են դրված[40]: Արտաշատի պարիսպների ներքին շարքն ընդհանուր է բոլոր բլուրների համար, բայց բլուրները, իրար կապող նեղ անցումները դարպասներով անջատելու շնորհիվ, վերածվել են պաշտպանական առանձին միավորների: Քաղաքի բլուրների անջատումն առանձին հզոր պարիսպներով, նպատակ ուներ խափանելու թշնամու ազատ տեղաշարժվելու հնարավորությունը և ստիպելու ծանր մարտեր մղել ամեն մի թաղամասի համար:

Պատի հիմնախարսխի բարձրությունը պայմանավորված է տեղանքով և կազմում է 0,50–1,5 մ, որի վրա բարձրանում է հում աղյուսե շարվածքը (45 x 45 x 14 սմ): Հիմքերն ամրացնելու և քայքայումից զերծ պահելու համար պարսպի ողջ պարագծով, մանր, կլորավուն քարերով պատրաստված է 30–100 սմ լայնությամբ, կավե հատուկ շաղախով ամրացված ցածր հենապատ:

Առայժմ հայտնի են միայն բլուրների պաշտպանական համակարգում բացված արտաքին դարպասներից հինգը՝ հյուսիսային (լայն. 1,5-2,0 մ) հյուսիսարևելյան և հյուսիսարևմտյան մասերում (աղ. III, 2): Մուտքերը տարբեր լուծումներ ունեն, սակայն միշտ պաշտպանվել են երկու աշտարակներով և կառուցվել այնպես, որ դեպի դարպասները տանող ճանապարհներն անցնեն պարիսպների կողքով: IV–V և VII–VIII (լայն. 4,5-5,0 մ) բլուրների միջև եղած արտաքին մուտքերը ներս են դրված ընդհանուր գծից (աղ. II, 1): Պաշտպանությունում դեռևս պարիսպները կարևոր դերէին խաղում, սակայն գլխավոր դերը պատկանում էր աշտարակներին, որոնց վրա նետարձակ և քարանետ մեքենաներ են տեղադրվել: Հայտնաբերվել են տարբեր չափերի ռմբաքարեր, որոնց մեծ մասը հատուկ է պատրաստված[41]: Պաշտպանության ժամանակ հեծելազորի և հետևակի ոտքերի տակ նետելու համար օգտագործել են նաև երկաթյա եռաթև ու քառաթև փշեր, որոնց մի ծայրը բոլոր դեպքերում ցցվում էր վեր: Այդպիսի փշեր շատ են հայտնաբերվել հատկապես I բլրում[42]: Կարասներում և մեծ անոթներում հաճախակի հայտնաբերվող նավթը (կուպր) վկայում է դրա կիրառումը ոչ միայն կենցաղում՝ ճրագների համար, բժշկության մեջ, այլև պաշտպանական նպատակով, որի մասին գրում են Պլինիոս Ավագն[43] ու Դիոն Կասիոսը[44]:

VI և VII բլուրները, որոնք համեմատաբար բարձր էին և նույնպես լավ ամրացված, միջնաբերդի հետ կազմում էին պաշտպանական համակարգի առանցքը: Քաղաքը պաշտպանվել է նաև աշխարհազորի օգնությամբ: Այսպիսով, Արտաշատն ու-

---

[40] *Շրջանաձև աշտարակներ ունեն Արցախի Տիգրանակերտի արտաքին (արևմուտքի) և միջնաբերդի պարիսպները:*

[41] А. М. А к о п я н. Каменные ядра из Арташата.– “Проблемы античной культуры”. М., 1986, с. 232-237, рис. 1-2.

[42] Б. А р а к е л я н. Арташат I, табл. XXIX.

[43] P l i n. N. H., 11, 108.

[44] D i o. XXXVI, 1, 2.

նեցել է պաշտպանական միասնական ճկուն համակարգ՝ առանցքային երեք անմատչելի ամրոցներով, որն ի վիճակի էր դիմագրավելու թշնամու մեծ ուժերին և դիմանալու երկարատև պաշարման: Արտաշատի պաշտպանական համակարգն այնքան կատարյալ է եղել, ռելիեֆն այնպիսի հնարամիտ ձևով է օգտագործվել, որ շինարարական երրորդ շրջանում (մ. թ. 60-ական թվականներ) գրեթե նույնությամբ վերականգնվել է: Այն կառուցված է իր ժամանակի պաշտպանական ռազմարվեստին համապատասխան: Ուստի, Արտաշատի պարիսպների ուսումնասիրությունը թույլ է տալիս պատկերացում կազմել Հայաստանի հելլենիստական և ուշ անտիկ շրջանի պաշտպանական կառույցների, զարգացման մակարդակի, ռազմական տեխնիկայի ու ռազմարվեստի մասին:

Հայաստանի քաղաքներն իրենց ռազմավարական դիրքի, մեծ ու հզոր պաշտպանական կառույցների շնորհիվ կարևոր դեր էին կատարում երկրի պաշտպանության գործում: Հայկական լեռնաշխարհի քաղաքների ու ամրոցների խիտ ցանցը կապված էր երկրի պաշտպանության ավանդական, ընդհանուր համակարգի հետ, ինչը պայմանավորված էր Հայաստանի աշխարհագրական ինքնատիպ դիրքով: Այն ձևավորվել էր դեռևս ուրարտական շրջանում, իսկ անտիկ շրջանում ավելի կատարելագործվել:

Արտաշատի կառուցման ժամանակ հատուկ ուշադրություն է դարձվել տեղանքին: Ամեն բլուր ունի իր ռելիեֆին համապատասխան հատակագիծ և կառուցվել է նախապես մտածված, ընդհանուր միասնական պլանով, ուր հաշվի են առնված քաղաքաշինության հետ կապված բոլոր հարցերը: Շինարարական յուրաքանչյուր շրջանում վերացվել են նախորդի թերությունները: Քաղաքաշինական որոշակի սկզբունքներ, ելնելով պաշտպանական և այլ նկատառումներից, բնորոշ են առանձին բլուրների և շինարարական շրջանների: Գլխավոր փողոցներն ուղղված են հյուսիս-հարավ (չնչին շեղումներով), հավանաբար, քամիներից ավելի լավ պաշտպանվելու համար: Արտաշատի հատակագծում քաղաքաշինության հետ կապված ոչ մի հարցի նկատմամբ մեխանիկական մոտեցում չի ցուցաբերվել: Այդ են վկայում ռելիեֆին համապատասխան փողոցների սահուն պտույտները, երբ խանգարող ժայռերը, փողոցների ուղղությունը չփոխելու համար, հարթեցվել են կամ աստիճանաձև մշակվել, բնակելի համալիրների սենյակների մի մասը փորվել է ժայռերի մեջ, կառուցվել հենապատեր (հատկապես VII բլրի արևելյան լանջին) և այլն[45]: Հայտնի է, որ ինժեներական աշխատանքների հիանալի ավանդներ էր ստեղծել ուրարտական ճարտարապետությունը:

Հելլենիստական քաղաքների խտությունը (65–75%), որը կրկնակի ավելի էր ուրարտականից[46] (35–40%), ստիպել է հայ շինարարներին ավելի ռացիոնալ օգտագործել պարսպի ներսում գտնվող յուրաքանչյուր հողակտոր, ուստի, իրենց ավանդական ինժեներական փորձը հարստացնելով նաև հելլենիստական քաղաքաշինու-

---

[45] *Ժ. Դ. Խ ա չ ա տ ր յ ա ն. Արտաշատի VII բլրի 1973–1975 թթ. պեղումների արդյունքները, էջ 55–56, նկ. 2: Նման ձևով են մշակված նաև Արցախի Տիգրանակերտի ժայռերը:*

[46] Ж. Д. Х а ч а т р я н, А. В. Т о н и к я н. *Նշվ. աշխ., էջ 33:*

թյան նվաճումներով, կատարել են լայն ծավալի ինժեներական աշխատանքներ: Այն բնորոշ է բարդ ռելիեֆ ունեցող փոքրասիական քաղաքներին (Պերգամոն և այլն): Կառուցողական արվեստի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Արտաշատում կիրառվել են առաջավոր բոլոր այն ձևերը, որոնք առաջարկվում են անտիկ հեղինակների կողմից (փայտե սեյսմիկ գոտիներ, արմատուրայի օգտագործում և այլն):

Արտաշատի բնակարանների առանցքը կազմում է ընդհանուր սենյակը, անկախ նրա տեղադրությունից, որի շուրջ համախմբված են մյուս սենյակները[47]: Այն բնորոշ է շինարարական բոլոր շրջաններին: Տան նման կառուցվածքը Հայկական լեռնաշխարհում շատ հին ակունքներ ունի, հանդիպում է նաև Փոքր Ասիայում ու Միջագետքում: Այն վերջնականապես ձևավորվում է ուրարտական շրջանում[48], և ինչպես Արտաշատի պեղումներն են ցույց տալիս, շարունակվում է հելլենիստական և ուշ անտիկ շրջանում ու իր հետագա զարգացումն ստանում վաղ միջնադարյան պալատական կառույցներում (Դվին, Արուճ):

Պեղումներով բացված քաղաքի թաղամասերի ուսումնասիրությունից երևում է, որ դրանք ոչ թե անսիստեմ, տարերայնորեն կառուցված, մեկը մյուսին հարող բնակարաններից են բաղկացած, այլ պլանավորված ձևով ստեղծված, երբեմն կարճ ժամկետում կառուցված և հետագայում որոշ դեպքերում մասնակի փոփոխությունների ենթարկված համալիրներ են: Փոփոխություններ, որոնք չեն խախտել դրանց սկզբնական ընդհանուր հատակագիծը և ներքին հիմնական կառուցվածքը: Ըստ էության, դրանք մի հսկայական շինություն են, որի հիմնական պատերն անպայմանորեն կառուցված են միանգամից (աղ. III, 1, 2, V, 1):

Պեղված թաղամասերի հատակագծերը համոզում են դրանց կանոնավոր բնույթը: Փողոցներով բաժանված բնակելի համալիրների մեկ գծի վրա լինելը խոսում է այն մասին, որ քաղաքի թաղամասերը, անկասկած, կառուցվել են նախապես մշակված միասնական հատակագծով՝ որպես պաշտպանական համակարգի հետ սերտորեն կապված մեկ միասնական համալիր: Թե ինչ աստիճանի սերտ է եղել այդ կապը, երևում է համալիրների մեջ թողած անցումներից (I, VIII բլուրներ, աղ. III, 1, 2) կամ պարիսպների երկայնքով թողնված փողոցներից (V բլուր) և այլն:

Արտաշատն ունեցել է կոմունալ տնտեսության լայն ցանց: Քաղաքը խմելու ջուր է ստացել կավե լայն խողովակներով (55 x 45 սմ) Վեդու կողմից (աղ. V, 2): Ջրամատակարարման այդ սիստեմը բացվել է Փոքր Վեդի գյուղի դաշտերում (1987 թ.), պատրաստվել է մ. թ. I դարում՝ Տրդատի կողմից քաղաքը կառուցելու ժամանակ: Այն կարող էր բավարարել հարյուր հազարանոց բնակչություն ունեցող քաղաքի: Կավե նեղ խողովակներով (տրամագիծը՝ 10 սմ) ջուրը բաժանվել է վերին քաղաքի թաղամասերին: Այդպիսի խողովակներ են հայտնաբերվել VIII բլրի խեցեղեն թրծելու վառա-

---

[47] *Ա. Վ. Տ ո ն ի կ յ ա ն. Արտաշատի ուշ հելլենիստական դարաշրջանի բնակելի տների ճարտարապետությունը.– ԼՀԳ, 1987, № 9, էջ 68, 73:*

[48] *Կ. Կ. Ղ ա ֆ ա դ ա ր յ ա ն. Արգիշտիխինիլի քաղաքի ճարտարապետությունը, Երևան, 1984, էջ 125-127:*

բանում (աղ. V, 3), իսկ խողովակաշարեր՝ VI, VII, IX բլուրների միջև[49]: Ջրի պաշարն ապահովվել է նաև ջրհորների միջոցով (VIII, IX բլուրներ): Քաղաքի տարբեր մասերում բացվել են դրենաժային ցանցեր, պարիսպների մեջ թողնված են անձրևաջրերի հեռացման անցքեր և այլն:

Ջրի առատությունը հնարավորություն է տվել ստեղծել բաղնիքների լայն ցանց: Միայն VIII բլրի վրա հայտնի են մի քանի բաղնիքներ[50], որոնցից երկուսն իրարից հեռու են ընդամենը 25–30 մ: Բաղնիքներից մեկը, որը համեմատաբար ավելի լավ է պահպանվել, բաղկացած է ութ սենյակից: Այն թեև մտնում է ընդհանուր համալիրի մեջ, սակայն բնակելի տան հետ չի կապվում. դրա դռները բացվում են դեպի արևմտյան կողմում գտնվող բակը: Հավանաբար, կառուցվել է 114–117 թթ., երբ Արտաշատում կանգնած են եղել սկյութական IV և իտալիկների I լեգեոնները: Հայտնաբերված հենասյուները (հիպոկաուստ), կրաքարե, կավե քառանկյուն և կլոր խողովակները, քառակուսի և կլոր՝ թրծած ու քառակուսի հում աղյուսները, թույլ են տալիս ենթադրելու, որ այն մի քանի անգամ ավերվել է և վերականգնվել: IV դ. սկզբին բաղնիքը վերածվել է բնակելի սենյակի, բայց հիպոկաուստի սյուները չեն հանել, այլ ծածկել են հողով և սվաղել կրաշաղախով: Բաղնիքներից երկրորդն առաջին փողոցում է, որը շատ վատ է պահպանվել, սակայն կարելի է ենթադրել, որ այն ունեցել է վերոհիշյալ բաղնիքի նման հատակագիծ: Բոլոր բաղնիքները ծածկված են եղել կղմինդրներով: Երրորդ բաղնիքի հետքերը նկատվել են բլրի արևելյան հատվածում, իսկ չորրորդը, սկավառակաձև աղյուսից պատրաստված հիպոկաուստով, պատահաբար բացվել է քաղաքի VIII բլրի հյուսիսարևելյան հատվածում:

Արաքսի ձախ ափին հայտնաբերված տաճարի հարթակի արևելյան պատին կից մեծ բաղնիքի միայն երեք սենյակ է բացված. մի մեծ սենյակ՝ հյուսիսային, երկու սենյակ հարավային կողմում:

Բաղնիքը կառուցված է տարբեր մեծության ու ձևերի կարծր քարերով և կրաշաղախով: Անկյունային հատվածները, դռների շեմերը և կողքերը շարված են խնամքով մշակված սալերով ու զանգվածեղ քարերով: Պատերի պահպանված բարձրությունը 1,50–2 մ է, լայնությունը՝ 1,15–1,08 մ: Պատերը սվաղված են բարձրորակ անջրաթափանց կրաշաղախով, որը մի շարք հատվածներում պահպանվել է:

Հարավարևմտյան սենյակը, որը ամենափոքրն է, հավանաբար, հանդերձարան (apodyterium) է: Վերջինիս պատերից երեքն ուղիղ են, արևելյանը կիսաշրջանաձև է (5,6 x 3 մ, կիսաշրջանաձև մասում՝ 4 մ, ընդհանուր մակերեսը մոտ 20 մ² է): Այս պատին կա երկու բացվածք (լայն. 90 սմ, 105 սմ, աղ. VI, 1, 4): Դռան մի բացվածք էլ կա հյուսիսային պատի կենտրոնում: Հատակը հարդարված է խճանկարով (աղ. VII, 1):

Արևելյան պատին հենասյուների բարձրությամբ բացված կամարակապ անցքը (XII, 1), որը միացնում էր արևելյան սենյակի հիպոկաուստի հետ, վկայում է, որ խճանկարով սենյակը նույնպես ունի կրկնակի հատակ և տաքացվել է: Վաղ միջնա-

---

[49] *Ժ. Դ. Խաչատրյան, Ա. Գ. Կանեցյան. նշվ. աշխ., էջ 87,* Б. Н. Аракелян. Заметки о водоснабжении и банях городов Древней Армении.– “Вестник общественных наук” АН АрмССР (далее – ВОН), 1979, № 10, с. 77–79, рис. 2 а, б:

[50] *Չափագրությունները կատարել է ճարտարապետ Ա. Գ. Կանեցյանը:*

դարում, սակայն, այն վերածվել է բնակելի սենյակի: Դռան լայն բացվածքը փակվել է միաշար պատով (28 սմ), որը ներսի կողմից սվաղվել է կրաշաղախով: Սվաղվել է նաև խճանկարով հատակը, որը տեղ-տեղ պահպանվել է: Այստեղ տեղադրված մեծ, հաստապատ երեք կարասը, գրունտային ջրերի բարձր մակարդակը և հատակին վառված ուժեղ կրակը դարձել են հիպոկառուստի սյուների քայքայման ու փլուզման պատճառ:

Բաղնիքն ամբողջովին բացելուց և մաքրելուց հետո միայն հնարավոր կլինի ճշգրտել մնացած սենյակների դասավորությունն ու նշանակությունը: Համաձայն Վիտրուվիոսի[51] և Պալադիի[52] ՝ ոչ միայն տաճարի տեղի ընտրությունն էր շատ կարևոր, այլև հասարակական մյուս կառույցների, այդ թվում՝ բաղնիքի: Վերջինիս տեղը հնարավորին չափ պետք է տաք լիներ, քամիներից պաշտպանված: Արտաշատում նոր բացվող բաղնիքի տեղը միանգամայն համապատասխանում է այդ պահանջին (աղ. XII, 3): Համալիրի և բաղնիքի ջրամատակարարման հարցը լուծվել է Արաքս գետի օգնությամբ՝ խողովակների միջոցով: Բաղնիքը ծածկված է եղել կղմինդրներով: Ներքին սենյակները լուսավորվել են առաստաղից[53]: Այդպիսին է խճանկարով սենյակը:

Խճանկարը պահպանվել է դռների շեմերին և պատերի երկայնքով հատակի տարբեր լայնության շերտերին, որոնք հիմնականում թեքված են ներքև: Հաստ հատակի կոտրատված զանազան մեծության բեկորներն ընկած են այլևայլ դիրքով ու խորության վրա (աղ. VI, 4): Երկար ժամանակ գտնվելով խոնավ վիճակում, կրակի տեղերում խճանկարի որոշ մասերի հատիկները պոկվել են: Խճանկարը պատրաստված է ֆիլզիտից: Ընդհանուր ֆոնը սպիտակն է: Կենտրոնական, արևելյան և, հատկապես, հարավային պատերի հարևանությամբ ընկած բեկորներին նկատելի են սև հատիկներով (ֆիլզիտի հատիկի վրա քսած սև գույնի սմալտայով) արված ուղղանկյուն շրջանակի անկյունը և մի երկար հատված (լայն.՝ 8 սմ, պահպանված երկար.՝144 սմ): Երևում են նաև ինչ-որ ոլորուն զարդերի մասեր:

Հարավային և հյուսիսային պատերի մոտ, ինչպես նաև մյուս սենյակներում հայտնաբերվել են ուղղանկյուն և քառակուսի, անկյուններին կոնաձև էլուստներով (բարձր. 6-10 սմ) աղյուսներ: Դրանք ծայրերով ամրացվել են պատերին և ծածկվել սվաղով, որպեսզի տաք ծուխը թափանցի դատարկ տարածություն և սենյակները տաքացվեն նաև պատերի միջոցով: Այսինքն՝ տաքացվում էր ոչ թե օդը, այլ հատակը և պատերը, ինչն ավելի հաճելի էր ու առողջարար: Ուշագրավ է հյուսիսարևմտյան պատից ոչ հեռու ուղղահայաց դիրքով բացված, չորս գլանաձև միջանցիկ անցքե-

[51] В и т р у в и й, V, X, 1-5,

[52] П а л а д и й. О сельском хозяйстве, I, 40-41.– В кн.: “Архитектура античного мира” (составители В. П. Зубов и Ф. А. Петровский). М., 1940, с. 213-214.

[53] О г ю с т Ш а у з и. История архитектуры. Т. 1. М., 1935, с. 477.

1 2

Աղյուսակ I



1

2

Աղյուսակ II



1 2

Աղյուսակ III



1 2 3 4

Աղյուսակ IV

ռով քառակուսի կրաքարը (բարձր. ՝ 75 սմ, լայն. ՝ 50 x 50 սմ, անցքերի տրամագիծը ՝ 14 սմ): Ամբողջական քարի բարձրությունը 75 սմ է, այնքան, որքան մեծ սենյակում պահպանված 13 աղյուսով հենասյան բարձրությունը (76 սմ): Սենյակի հարավային պատից 60 սմ հեռավորության վրա, դեպի կենտրոն բացվեցին տասը հենասյան մնացորդներ ՝ քառակուսի աղյուսի վրա դրված մեկ, երկու սկավառակաձև աղյուսներով:

Այսպիսով ՝ առկա է հիպոկաուստի հինգ տիպի հենասյուն, քառակուսի և սկավառակաձև աղյուսներ, գլանաձև և ուղղանկյուն կավե խողովակներ և կրաքարե չորս գլանաձև անցքով, որը նորություն է:

Սենյակի հատակը հյուսիսային մուտքից դեպի հարավարևմտյան փոքր դռան բացվածքը 5 սմ թեքություն ունի, որտեղ լայնքով առվակ կա (լայն. ՝ 12, խոր. ՝ 12 սմ): Այն մտնում է հարավային պատի տակ և թեքվում դեպի արևմուտք: Ըստ երևույթին, այստեղ լողացել են, և ջուրը առվակով հոսել է դուրս[54]:

Մեծ սենյակի (9 x 7,80 մ) գլխավոր ճակատն ուղղված է դեպի արևելք: Արևելյան կողմում աբսիդ ունի (խորշի խորությունը ՝ 1,30 մ, լայնությունը ՝ 4,10 մ), սենյակի ընդհանուր մակերեսը մոտ 75 մ² է (աղ. XII, 2): Այն ամենատաք սենյակն է, լողասենյակը (caldarium): Բացի հանդերձարանի մուտքից, հարավարևմտյան անկյունում ունի ևս մի դռան բացվածք: Մեծ սենյակի առաջին (ստորին) հատակը պատված է կրաշաղախե ամուր սվաղով: Այստեղ բացվել են քառակուսի աղյուսի վրա շարված 2–13 սկավառակաձև աղյուսներով սյուներ: Ի հայտ է եկել վեց շարք: Արևելյան մասում, ներառյալ աբսիդը, հորիզոնական և թեքված վիճակում պահպանվել է երկրորդ, վերին հատակի մեծ մասը (հաստ. ՝ 20 սմ): Այն շատ կարծր է: Դրանց տակից երևում են հիպոկաուստի սյուները (աղ. XII, 2): Կրկնակի (վերին) հատակը կառուցված է ուղղանկյուն 4 և 5–6 սմ հաստության աղյուսով, անջրաթափանց կրաշաղախով: Ստորին հատակից երկրորդ հատակի բարձրությունը 1 մ է: Մեծ սենյակի հարավարևելյան պատի երկրորդ հատակից ներքև թրծած քառակուսի աղյուսներով (44 x 44 սմ, հաստ. ՝ 5 սմ) կառուցված է կամարաձև մեծ բացվածք (90 x 70 սմ): Հայտնաբերվել են լայն ու հաստ խեցիով կիսախողովակների մասեր, որոնք, հավանաբար, ծառայել են ջրահեռացման համար:

Այդպիսով, սա Արտաշատում բացված երրորդ բաղնիքն է: Այն թվագրվում է II դ. վերջով – III դ. առաջին քառորդով: Դրա օգտին է խոսում նաև Սեպտիմոս Սեներոսի ՝ Պոնտոսի Ամասիայում 206/207 թթ. թողարկված բրոնզե դրամը:

Հայաստանում ծանոթ էին հունա-հռոմեական աշխարհում լայն տարածում ստացած նոր տիպի կառույցներից մեկին, բաղնիքների շինարարական սկզբունքներին: Կառուցել են ոչ միայն փոքր չափերի մասնավոր բաղնիքներ, այլև խոշոր հասարակական թերմեր: Արտաշատն ունեցել է բաղնիքների լայն ցանց: Հավանաբար, իբրև մայրաքաղաք, առաջին բաղ-

[54] *2001–2002 թթ. պարզվեց, որ տաքացվել է նաև Գառնիի բաղնիքի խճանկարով հանդերձարանը, որտեղ նույնպես լողացել են ավազանի սառը ջրով: Տե՛ս Ժ. Դ. Խաչատրյան. Դարձյալ Գառնի ամրոցի բաղնիքի մասին.– Հին Հայաստանի մշակույթը, XII, Հանրապետական գիտական նստաշրջան, զեկուցումների հիմնադրույթներ, Երևան, 2002, էջ 48–51:*

1

2

3

Աղյուսակ V



1

2

3

4

5

Աղյուսակ VI



1

2

3

4

5

6

Աղյուսակ VII

1

2

3

Աղյուսակ VIII

նիքները կառուցվել են Արտաշատում մ. թ. II դ. սկզբին: Այս ամենը խոսում է քաղաքաշինության, կոմունալ տնտեսության, բնակչության կուլտուր-կենցաղային պայմանների բարձր մակարդակի մասին:

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում միջնաբերդից[55] և Արաքսի ափի համալիրից[56] հայտնաբերված ատտիկյան բազան ու դրանց մասերը, ատամնավոր և հարթ գլանները և դրանց բեկորները, կորնթոսյան և հոնիական խոյակների կտորներ (աղ. VII, 2-5), ձևավոր ու քանդակազարդ քիվերը (աղ. VIII, 2), որոնց ուլունքաշար և ձվաձև (օվնաներով) նախշերը նման են Գառնիի տաճարի զարդերին, իսկ մյուս մանրամասները, վարդյակները և այլն, տարբերվում են: Միջնաբերդի վերին ողջ հարթակը ծածկված է մշակված կրաքարե ճարտարապետական դետալներով (աղ. VIII, 1):

Ինչպես հայտնի է, քաղաքները եղել են գյուղատնտեսական մթերքների արտադրության խոշոր կենտրոններ: Դրանք ունեին իրենց գյուղատնտեսական գոտիները, որոնք կոչվում էին տվյալ քաղաքի անունով[57]: Դրանք պատկանում էին թագավորին, քաղաքային համայնքին և հարուստ քաղաքացիներին[58]: Արտաշատի գյուղատնտեսական գոտին, որտեղ հայտնաբերվել են այդօրինակ բնակատեղիներ զբաղեցրել է մոտ 3000 հա: Արարատյան դաշտը հնուց ի վեր համարվում էր Հայաստանի երկրագործական հիմնական շրջաններից մեկը. այդ մասին վկայում են հայ և օտար աղբյուրները[59]:

Հայտնաբերվել են երկրագործական զանազան գործիքներ, երկաթե բրիչներ, մանգաղներ, կեռ, սուր ծայրով դանակներ և այլն: Գտնվել են նաև ածխացած վիճակում փափուկ ցորեն, գարի, կորեկ, քունջութ[60] (?), խաշխաշի սերմ, VIII բլրի I դարի շերտից՝ ձիթապտուղ, ինչպես նաև ընկույզ՝ նավթի կարասի մեջ (I բլուր) մ. թ. ա I դ. շերտից: Առատ են նաև երկրագործական մթերքների վերամշակման հետ կապված գտածոները, տարբեր չափերի և ձևերի սանդերը, լծակավոր աղորիքներն ու երկանքները, որոնց արտադրողականությունը, սակայն, շատ ցածր էր: Այլուրի արտադրությունը բացառիկ ծանր աշխատանք էր: Հունաստանում և Հռոմում, հնարավոր է նաև Հայաստանում, դա կատարում էին ստրուկները: Արտաշատում հայտնաբերվել է ձիերի և ավանակների միջոցով պտտվող հռոմեական տիպի բազալտե երկկոնաձև մեծ երկանք, որի արտադրողականությունը տասնապատիկ ավելի էր, քան ձեռքով պտտվող երկանքներինը:

Հայտնի է, որ խաղողագործությունը և գինեգործությունը Ուրարտուի տնտեսության առաջատար ճյուղերից էին: Անտիկ շրջանում դրանք նույնպես բարձր զար-

---

[55] Ž. D. K h a c h a t r i a n. Artaxata, Fig. 14, 24-26.

[56] Ž. D. K h a c h a t r i a n. Archaeological Research, Fig. 8-12.

[57] *Եղիշեի Վասն Վարդանանց և Հայոց պատերազմին, Երևան, 1957, էջ 68, 79:*

[58] *ՀԺՊ, հ. I, էջ 660:*

[59] S t r a b o, II, I, 14; XI, VII, 2; XV, I, 58 *և այլն, Մ ո վ ս է ս Խ ո ր է ն ա ց ի, I, 16, II, 12, Ղ ա զ ա ր Փ ա ր պ է ց ի, Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ստ. Մալխասյանցի, Երևան, 1982, I, 7, 8:*

[60] *Որոշել է հնաբուսաբան Ռոման Հովսեփյանը:*

գացման էին հասել: Այդ են վկայում ինչպես գրավոր աղբյուրները, այնպես էլ հնագիտական հայտնագործությունները:

Արտաշատում գտնվել է բազալտե տարապան՝ խաղող ճզմելու շրջանաձև խոշոր սալ (տրամ.՝ 118 սմ, բարձր.՝ 30 սմ): Վերջինիս մերձակայքից հայտնաբերված մեծ կարասների բեկորները վկայում են, որ քաղցուն հավաքվել է դրանց մեջ: Արտաշատի տարապանը Հայաստանից հայտնի ամենահին և ամենամեծ արտադրական սալն է (մ. թ. ա II դ.)[61]: Գինեգործության ծավալների ավելացման մասին է խոսում VIII բլրում բացված մեծ ավազանը (մ. թ. 60 թ. – II դ. կես): Այն քառակուսի է (3,75 x 3,80 մ, պահպ. բարձր.՝ 35 սմ), հյուսիսից-հարավ ուղիղ կենտրոնից երկու կես է արված, և իր հերթին արևելյան կեսը, լայնությամբ բաժանված է երկու հավասար մասերի (աղ. VII, 6): 30 սմ լայնությամբ աղյուսաշար պատը ներսից ունի 4–5 սմ լայնությամբ կրաշաղախի անջրաթափանց շերտ, որի մեջ եղեգնի ձողեր են եղել: Հատակին սվաղի վրա շարված են եղել կավե լավ թրծած քառակուսի աղյուսներ (պահպանվածների չափերն են՝ 37 x 37 սմ), որոնց մակերեսը ծածկված է 1–2 սմ հաստությամբ կրաշաղախով: Ավազանում հայտնաբերվել են պատերի քանդված սվաղի, կավե խողովակի բեկորներ[62]: VIII բլրում հայտնաբերված ծծմբի կտորները նույնպես կապված են գինեգործության հետ: Ծծմբով ախտահանում էին գինու հորերն ու կարասները: Ավազանը կարող էր տանել 14000 լիտրից ավելի գինի, ըստ որում երեք բաժնում կարելի էր տարբեր տեսակի գինիներ պատրաստել:

Կենդանական ոսկորների առատությունը, ոչխար խուզելու երկաթյա մեծ մկրատները, տաշտերը, կովկիթները, կաթնամանները, ծորակավոր անոթները, ձձումները վկայում են Արտաշատի տնտեսության մեջ երկրագործության հետ, անասնապահության մեծ դերի մասին: Կարևոր տեղ է գրավել ձիաբուծությունը: Ստրաբոնն Հայաստանն անվանում է ձիերով բացառիկ առատ երկիր և նշում, որ այստեղ մարգագետիններից մեկն ուղղակի կոչվում է «ձիառատ»[63]:

Արտաշատում ձկնորսության տարածված լինելու մասին են վկայում պղնձե կարթը, կախիկ ծանրոցները, ձկների կմախքները և բազմաթիվ ու բազմազան ձկան ափսեները:

Պեղումները վկայում են, որ Արտաշատը եղել է արհեստագործական խոշոր կենտրոն: Հայտնաբերվել են տարբեր արհեստանոցներ, գործիքներ կամ արհեստագործական արտադրանք: Բացվել է կիր պատրաստելու վառարան (VIII բլ.), մետաղաձուլական և դարբին-զինագործի արհեստանոցներ, գահույքի ձևավոր ոտքեր և տարբեր տիպի զարդեր ձուլելու կաղապարներ, բրոնզե ոսկերչական մուրճիկ, քարե, մետաղե և ուրիշ նյութերից կիսաֆաբրիկատներ և այլն: Գտնվել է խեցեղեն թրծելու շրջանաձև, երկհարկանի հնոց, որն ավերվել է կավե խողովակներ թրծելու ժամանակ (աղ. V, 3):

---

[61] Ž. D. K h a c h a t r i a n. Artaxata Capitale..., p. 115, Fig. 24.

[62] *Նույն տեղում, նկ. 23:*

[63] S t r a b o, XI, 12, 7.



Աղյուսակ IX

Աղյուսակ X

Աղյուսակ XI



Աղյուսակ XII

Աղբյուրները հիշատակում են մոտ 50 արհեստների մասին[64]: Արտաշատում զբաղվել են գրեթե բոլոր արհեստներով: Դրանց մի մասն առնչվում է շինարարության հետ, ինչպես, օրինակ, որմնադրությունը, քարամշակությունը, ատաղձագործությունը, հյուսնությունը, ծեփագործությունը և այլն: Հելլենիստական և ուշ անտիկ շրջանում ամենատարածված շինարարական խեցեղենը կղմինդրներն էին: Հայտնաբերվել է չորս տիպի սոլեն (հարթ կղմինդր) և երեք տեսակի կալիպտեր: Առայժմ ամենահին կղմինդրները Հայաստանում մեզ հայտնի են Արտաշատից: Դրանց պատրաստման եղանակն ու զանգվածային բնույթը վկայում են, որ այն արդեն զարգացման բարձր մակարդակի վրա էր գտնվում: Շատ հավանական է, այդ կուլտուրան Փոքր Ասիայից է անցել Հայաստան: Դրա օգտին է խոսում նաև անվանումը՝ «կղմինդր», որը փոխ է առնված հունարեն «կերամիս» բառից[65]:

Զարգացած էին մետաղագործական արհեստները, դարբնությունը, զինագործությունը, պղնձագործությունը, գեղարվեստական մետաղագործությունը (տորևտիկան), ոսկերչությունը, արծաթագործությունը, պղնձե կիրառական արվեստի իրերի ու առարկաների պատրաստումը, ակնագործությունը, որը կապված էր վերոհիշյալ արհեստների հետ: Հելլենիստական դարաշրջանում ոսկերիչները կիրառել են տեխնիկայի բոլոր ձևերն ու հնարները: Հաճախ համատեղվել են տեխնիկական տարբեր եղանակներ:

Ոսկերչության հետագա զարգացման գործում խոշոր նշանակություն ունեցավ գլանման լիսեռի հայտնագործումը[66], որը թույլ էր տալիս ստանալ, այսպես կոչված, «թերթիկավոր ոսկի», ֆոլգա, որը մինչ այդ հնարավոր չէր: Թերթիկավոր ոսկիով սնդիկի հետ միասին կատարում էին ոսկեջրումը, ամալգամացումը[67]: Այն նպաստում էր նաև որակյալ թիթեղ ստանալու գործընթացի արագացմանն ու դյուրացմանը:

Այս տեղաշարժերը ոսկերչության մեջ և, ընդհանրապես, մետաղի գեղարվեստական մշակման մյուս բնագավառներում մ. թ. ա. I դարում առաջ բերեցին աշխատանքի նոր բաժանում: Կային քանդակողներ, ձուլողներ, մոդելավորողներ, զենքեր պատրաստողներ և այլն:

Արտաշատում հայտնաբերված նյութերից ամենազանգվածայինը խեցեղենն է: Հելլենիստական խեցեղենը ձևավորվել է տեղական ավանդույթների հիման վրա: Ուրարտական խեցեղենի շատ ձևեր պահպանվել են նաև անտիկ շրջանում: Այդ շրջանում գունազարդ խեցեղենը նոր վերելք ապրեց: Դա պայմանավորված էր հելլենիստական աշխարհի, հատկապես Փոքր Ասիայի հետ ունեցած սերտ փոխհարաբերություններով, որտեղ գունազարդ խեցեղենը լայնորեն տարածված էր: Այն զարգանում էր՝ շարունակելով, այսպես կոչված, հոնիական և փռյուգական խեցեղենի ա-

---

[64] С. Т. Е р е м я н. Развитие городов и городской жизни в древней Армении.– “Вестник древней истории”, 1953, ¹ 3, с. 27-31.

[65] *Հ ր. Ա ճ ա ռ յ ա ն. Հայերեն արմատական բառարան, հ. II, Երևան, 1973, էջ 603-604:*

[66] Художественное ремесло эпохи Римской империи. Л., 1980, с. 8; В и т р у в и й, VIII, 4.

[67] М. Е. С е р г е е н к о. Ремесленники Древнего Рима. Л., 1958, с. 45.

վանդները: Հելլենիստական գունազարդ խեցեղենի ազդեցության շնորհիվ նորից աշխուժացան տեղական ավանդույթները, որոնք հարստացան նոր զարդամոտիվներով: Դրանք միագույն և բազմագույն են՝ գույների տարբեր համադրումով: Արտաշատի պեղումները վկայում են, որ դեկորի հարստությամբ, մակերեսի մշակվածությամբ Հայաստանի գունազարդ խեցեղենն իր ծաղկմանն է հասնում մ. թ. ա. II – I դդ. կեսերին, երբ այն դառնում է հելլենիստական խեցեղենի հիմնական տեսակը. թեև նրա մի շարք մոտիվներ կապված են նախորդ դարաշրջանների զարդերի հետ, սակայն, զարդանկարների հարստությամբ, հատկապես բազմագույն զարդերով անոթները տարբերվում են վերոհիշյալ խեցեղենից:

Խեցեղենի շատ օրինակներ հարդարված են գեղարվեստական բարձր ճաշակով: Կարելի է ենթադրել, որ գունազարդումով հիմնականում զբաղվել են հատուկ վարպետ-նկարիչներ: Միագույն պարզ զարդաձևերով խեցեղենը տարածման լայն արեալ ունի, մինչդեռ ավելի բարդ զարդամոտիվներով բազմագույն խեցեղենը բնորոշ է արևելյան Փոքր Ասիային և Հայկական լեռնաշխարհին:

Գունազարդ խեցեղենի մշակման գործում մ. թ. ա. I դ. կեսերից նկատվում է որոշակի անկում. զարդանախշը և փայլեցումը անփույթ է կատարվում, փայլեցվում է միայն զարդանախշը: Դրա փոխարեն, սակայն, բարելավվում է տեղական խեցեղենի որակը: Մ. թ. ա. II–I դդ. վարպետները, կապված դրա պահանջարկի աննախադեպ աճի հետ, ընդլայնում են արտադրությունը, հարստացնում են տեսականին, ստեղծելով խեցեղենի բազմաթիվ նոր տեսակներ ու ձևեր: Այս ամենը նպաստում են խեցեգործության զարգացմանը Հայաստանում: Ի հայտ են գալիս ներմուծված խեցեղենի ընդօրինակություններ (սկուտեղներ, ձկան ափսեներ, ծանծաղ ափսեներ, ունգվենտարիաներ, սկիֆոսներ և այլն), որոնք լաքի փոխարեն ծածկվել են կարմիր ու սև անգոբով և լավ փայլեցվել են: Երբեմն ընդօրինակվում էր ներմուծված անոթի և՛ ձևը, և՛ զարդամոտիվները. զարդերը կատարվում էին տվյալ կենտրոնին բնորոշ գույներով: Տեղական որոշ անոթների առանձին մանրամասներ՝ ներմուծված խեցեղենի օրինակով, փոփոխության են ենթարկվում, պահպանելով հանդերձ անոթի ընդհանուր ձևն ու կիրառման նշանակությունը: Զարդամոտիվների մեջ երևան են գալիս լիանաներից կազմված, տարբեր պտուղների պատկերներով զարդեր և այլն: Դա, անշուշտ, կապված էր Փոքր Ասիայի և Կիլիկիայի քաղաքներից գաղթեցված բնակչության հետ, որոնց մեջ, անկասկած, կային նաև արհեստավորներ: Այդ են վկայում ոչ միայն ներմուծված խեցեղենը, դրանց ընդօրինակությունները, այլև խեցանոթների վրայի հունարեն գրաֆիտիները, առանձին տառերի կամ բառերի ձևով, որոնք հաճախ են հանդիպում Արտաշատում և Արմավիրում:

Այսպիսով, Արտաշատի խեցեղենի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս հետևելու Հայաստանի խեցեգործության զարգացմանը, նրա ունեցած ազդեցություններին ու փոխազդեցություններին: Խեցեղենի արտադրության մեջ արմատական փոփոխություն է նկատվում մ. թ. I դ.: Անոթների պատրաստման և փայլեցման համար լայնորեն օգտագործվում է ոտքով պտտվող դուրգի անիվը: Խեցեղենի հիմնական մասն անգոբած և փայլեցված չէ: Գունազարդումն արվում է անփույթ և միայն կարմիր անգոբով: Տարածում են ստանում փորագիր զարդերը: Բարելավվում

է խեցեղենի որակը: Թրծումը կատարվում է հատուկ վառարաններում:

Սկսվում է ընդօրինակվել ներմուծված «պերգամոնյան» կարմիր լաքապատ խեցեղենը, որը ծածկվում է կարմիր անգոբով և խնամքով փայլեցվում:

Արտաշատում հայտնաբերվել է մեծ թվով ջնարակած խեցեղեն[68], որի արտադրությունը սկսվում է մ. թ. ա. II դարում և լայն տարածում ստանում մ. թ. ա. I – մ. թ. II դդ.: Դա կապված է Հայաստանում ապակեգործության զարգացման հետ: Արտաշատն անտիկ շրջանի ջնարակած խեցեղենի արտադրության խոշոր կենտրոններից մեկն էր:

Արտաշատի պեղումների շնորհիվ միայն հնարավոր եղավ հանգամանորեն խոսել անտիկ Հայաստանում ապակու արտադրության մասին: Արտաշատից հայտնաբերված մ. թ. ա. II – մ. թ. IV դդ. մեծ քանակությամբ կենցաղային ապակին, ապակյա սրվակ պատրաստելու կաղապարը, ապակու ձուլվածքը և այլն, ցույց են տալիս, որ մ. թ. ա. II–I դդ. Արտաշատում արտադրվում էին ապակյա անոթներ, իսկ մ. թ. I–II դդ. Հայաստանը դարձել էր անտիկ աշխարհի ապակեգործության կենտրոններից մեկը, իսկ Արտաշատը Հայաստանի ապակու արտադրության հիմնական կենտրոնը[69]:

Արտաշատում զարգացած է եղել ոսկրագործությունը, մանածագործությունը, ջուլհակությունը, ներկարարությունը, կոշկակարությունը, կաշեգործությունը, կողովագործությունը, դերձակությունը և այլն: Արհեստագործական արտադրանքի աճը տեղի էր ունենում ոչ միայն արտադրության ընդարձակման, այլ նաև արտադրամիջոցների կատարելագործման ու տեխնիկական զանազան հնարքների կիրառման հաշվին: Հայաստանում հելլենիստական և հռոմեական տեխնիկայի լավագույն նվաճումները յուրացվում էին ու ստեղծագործաբար լայնորեն ներդրվում արտադրության մեջ: Հանդես եկան արհեստագործության նոր ճյուղեր: Արտադրողական ուժերի զարգացման մակարդակը Հայաստանում բերեց աշխատանքի նոր բաժանումների, որն իր արտահայտությունը գտավ արհեստագործության բոլոր բնագավառներում:

Հելլենիստական շրջանում արագորեն աճում է առևտրական գործարքների տարածաշրջանն ու մասշտաբները: Հայաստանով էին անցնում միջազգային առևտրական ճանապարհները[70], որի հյուսիսային մայրուղու վրա կառուցված էր Արտաշատ մայրաքաղաքը (Էկբատանա–Գանձակ–Արտաշատ–Սեբաստոպլիս): Հայաստանի դերը կարևորվում է միջազգային առևտրում՝ Արևմուտքի և Արևելքի միջև մ. թ. ա. I դ., երբ Տիգրան II-ն Առաջավոր Ասիայի առևտրական կարևորագույն ճանապարհների վրա հսկողություն է սահմանում: Առևտրի և արհեստների զարգացման, ինչպես

---

[68] *Ժ. Դ. Խ ա չ ա տ ր յ ա ն. Հայաստանի անտիկ շրջանի ջնարակած խեցեղենը.– ՊԲՀ, 1977, № 3, էջ 183-194:*

[69] Ж. Д. Х а ч а т р я н. Стеклоделие в древней Армении (II – I века до н. э.).– ИФЖ, 1975, № 1, с. 248–258; Ж. Д. Х а ч а т р я н. Армения и Сирия – центры стеклоделия (производственные общности).– ВОН, 1983, № 7, с. 59–66.

[70] Я. М а н а н д я н. О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен (V в. до н. э. – XV в. н. э.). Ереван, 1954; С. Т. Е р е м я н. Армения, армянское купечество и развитие торговли между Европой и Азией до XIX в. М., 1970; *ՀԺՊ, հ. I, էջ 807-822:*

նան Հայաստանում հելլենիստական մշակույթի տարածման համար Տիգրանը հելլենիստական 12 քաղաքներից Հայաստան գաղթեցրեց մոտ կես միլիոն բնակչություն: Նրանց մի մասը առևտրականներ ու արհեստավորներ էին, որոնք բնակեցվեցին խոշոր քաղաքներում[71]: Արտաշատի դերն ավելի մեծացավ, իբրև տարանցիկ առևտրի կենտրոնի, որտեղ մաքսատուն կար[72]:

Արևելքում Հռոմեական կայսրության հաստատումից հետո, հատկապես, միջազգային առևտրի համար ավելի բարենպաստ պայմաններ ստեղծվեցին, որը թափ ստացավ մ. թ. I – II դդ.[73]: Առևտրական ճանապարհներն ընկան նրա հսկողության տակ. դրանք ավելի բարեկարգ ու անվտանգ դարձան, վերացան մաքսային խոչընդոտները: Վերոհիշյալ դեպքերով էր պայմանավորված Արտաշատի և ընդհանրապես Հայաստանի տնտեսամշակութային աննախադեպ վերելքը: Արտաշատը դարձավ միջազգային առևտրի ճանաչված կենտրոն: Ըստ Պնտինգերյան քարտեզի[74] (tabula Peutingeriana, IV դ.), Արտաշատը ճանապարհներով կապված էր Իրանի, Միջագետքի, Արևելամիջերկրածովյան քաղաքների, Փոքր Ասիայի՝ Հարավսնծովյան հունական քաղաքների, էգեյան և անտիկ աշխարհի այլերկրների ու առևտրական քաղաքների հետ: Հայտնաբերված հնագիտական հարուստ նյութերը հստակ պատկերացում են տալիս անտիկ աշխարհի առևտրատնտեսական կապերի մասին՝ հնարավորություն ստեղծելով կոնկրետացնել այն երկրներն ու քաղաքները, որոնց հետ կապված էր Արտաշատը[75]: Հելլենիստական երկրների հետ կապերի աշխուժացման և դրամական շրջանառության զարգացման մասին են վկայում բազմաթիվ դրամների առկայությունը: Արտաշատում, որպես առևտրական խոշոր կենտրոնի, բացի Արտաշիսյան թագավորների դրամներից, գտնվել են նաև տարբեր երկրների ու քաղաքների ոսկե, արծաթե, պղնձե դրամներ: Դրանք հայտնաբերվել են ինչպես քաղաքի բնակելի թաղամասերից, այնպես էլ դամբարաններից (մոտ 250 դրամ):

Ուշագրավ են I բլրից հայտնաբերված գանձերը: Դրանցից մեկը Տիգրան II-ի (աղ. X, 1) արծաթե 28 դրամից է բաղկացած (27 դրախմա, 1 տետրադրախմա)[76], մյուսը՝ տարբեր երկրների արծաթե 43 դրամներն են[77]՝ մ. թ. ա. II և I դ. առաջին կեսին պատկանող: Երրորդ գանձը՝ բրոնզե 56 դրամ, Արաքսի ափի տաճարական համալիրի

---

[71] S t r a b o, XI, XIV, 15.

[72] Я. М а н а н д я н. *Նշվ. աշխ., էջ 103, 108:*

[73] *Նույն տեղում, էջ 96:*

[74] *Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն. Հայաստանի գլխավոր ճանապարհները ըստ Պնտինգերյան քարտեզի, Երևան, 1936, էջ 11:*

[75] Ж. Д. Х а ч а т р я н. Армения и Сирия…, с. 64-65, *Ժ. Խ ա չ ա տ ր յ ա ն. Հայաստանում հայտնաբերված արևմտահռոմեական մետաղյա առարկաներ.– ԼՀԳ, 1984, № 10, էջ 76-77,* М. О. З а р д а р я н. Торгово-экономические связи Армении с эллинистическим миром в III–I вв. до н. э.– Автореферат на соискание ученой степени кандидата исторических наук. Ереван, 1986, с. 17.

[76] *Խ. Ա. Մ ո ւ շ ե ղ յ ա ն. Արտաշատի հայկական դրամների գանձը.– Հայ դրամագիտական հանդես, Լոս Անջելես, 1978, սեր. I, հ. IV, էջ 105-124, տախտ. XII-XIV:*

[77] *Դրամները որոշել է Մ. Զարդարյանը. պարթևական (7 դրախմա), աթենական «նոր ոճի» (2 տետրադրախմա), սելևկյան (17 տետրադրախմա, 2 դրախմա), կապադովկյան (14 դրախմա), Ալեքսանդր Մակեդոնացու դրամի ընդօրինակություն:*

տարածքից է, որոնց ծագումն ու պատկանելությունը դեռևս անհայտ է:

Հետաքրքիր են Արտաշատի քաղաքային դրամները, որոնց Ա երեսին պատկերված է Անահիտ-Տիխեն՝ դեպի աջ, աշտարակաձև թագով, Բ երեսին՝ դեպի ձախ քայլող հաղթանակի դիցուհին (Նիկա–Վիկտորիան), աջ ձեռքին բռնած դափնեպսակը՝ առաջ պարզած, ձախում՝ արմավենու ճյուղ, «Արտաշատի մայրաքաղաքի» հունարեն արձանագրությամբ (աղ. X, 2): Արիոբարզանի (մ. թ. ա. 2–4 թթ., որին Կայոս Կեսարը Մեծ Հայքի թագավոր էր նշանակել) և նրա որդի Արտավազդ IV-ի (մ. թ. ա. 4–6 թթ.) ժամանակաշրջանում կտրված դրամներ են[78]:

Արտաշատի ու ընդհանրապես, ողջ Հայաստանի կապերի ուսումնասիրության համար իրենց գիտական բացառիկ արժեքով և տեղեկատվությամբ աչքի են ընկնում կավե կնքադրոշմների արխիվները, որոնք հայտնաբերվել են V և VIII բլուրների վրա ու պատկանում են մ. թ. ա. 180-ական թվականներից մինչև մ. թ. 59 թ.[79]: Կնքադրոշմների թիվը ութ հազարից ավելի է: Դրանցից վեց հազարն ամբողջական են կամ բեկորի վրայի պատկերը որոշվում է: Արտաշատում գտնված բուլլաները հելլենիստական աշխարհում հայտնի հարուստ հավաքածուներից մեկն են: Վերջինս յուրահատուկ է նրանով, որ Արտաշատի V բլրի արխիվում Արևելյան և Արևմտյան կերպարներն ու պատկերները համատեղ են հանդես գալիս:

Արտաշատի բուլլաները 1035 ինքնուրույն տիպ են ներկայացնում, որոնցից մոտ երեք տասնյակը արամեերեն և հունարեն արձանագրություններ և մոնոգրամներ են, առանց պատկերի կամ պատկերի հետ: Արտաշատի բուլլաների աշխարհագրությունը շատ ընդարձակ է. այն ընդգրկում է Պարթևստանից մինչև Հռոմ, Հյուսիսմերձսևծովյան շրջաններից մինչև Եգիպտոս (աղ. IX, 8): Իրենց թեմատիկայով, կատարման եղանակով ու զուգահեռներով, սակայն, կնքադրոշմների մեծ մասը պատկանում է Հռոմի քաղաքացիական պատերազմների ժամանակաշրջանին՝ մ. թ. ա. I դարի երրորդ քառորդին: Դա վկայում է, թե անկախ իր կամքից, Հայաստանն որքանով էր ներքաշվել Անտոնիոս–Օկտավիանոս հակամարտության մեջ: Այն փաստը, որ բացվել է երկու արխիվ, ինքնըստինքյան վկայում է քաղաքի գործարար աշխույժ կյանքի, զարգացած գործավարության և փաստաթղթերի ֆիքսացման կատարելագործված ձևերի մասին, և Արտաշատը դասվում է արխիվներ ունեցած հելլենիստական խոշոր կենտրոնների թվին: Նույնիսկ նախնական ծանոթությունն Արտաշատի արխիվների հետ հարստացնում է մեր գիտելիքները ինչպես հելլենիստական աշխարհի, այնպես էլ Հայաստանի տնտեսամշակութային և քաղաքական կապերի մասին:

Արտաշատյան արխիվները ցույց են տալիս գրասենյակային ավանդների ժառանգականությունն ու անընդհատությունը: Արխիվները կարևոր աղբյուր են Ա-

---

[78] Р. Е. В а р д а н я н. К вопросу о датировке двух групп армянских монет эллинистической эпохи.– ИФЖ, 1987, № 2, с. 201–207. *Ն ո ւ յ ն ի՝* La numismatique Arménienne des origines au IVe s. Ap. j.-c. Les dossiers d'archéologiè, mai-juin 2007, № 321 Arménie, p. 84–87.

[79] Z'o r e s D. K h a c h a t r i a n. The Archives of Sealings , p. 365-370, pl. 73-76; Les bulles à empreintes sceaux d'Artachat, Arménie, Tresors de l'Arménie ancienne des origines au IVe siecle, Dobrée, 1996, p. 222–226; Ž o r e s D. K h a c h a t r i a n. Artaxata, p. 135–137, Fig. 66.

ռաջավոր Ասիայի պատմության՝ հայ-հռոմեական հարաբերությունների մութ ու վիճելի հարցերի և, հատկապես, Անտոնիոսի և Օկտավիանոսի հակամարտությանը զոհ դարձած Հայաստանի ու նրա թագավոր Արտավազդի քաղաքականության ճիշտ մեկնաբանման համար: Հարց, որը մշտապես քննարկման առարկա է եղել պատմագիտության մեջ:

Արտաշատի առևտրական լայն կապերի մասին են վկայում տարբեր երկրներից ու կենտրոններից՝ Հռոդոսից (մ. թ. ա. II-I դդ.), Կոսից և այլ վայրերից, ներմուծված ամֆորաները, որոնցով բերվել են ձիթապտղի յուղ և գինիներ[80], «պերգամոնյան» կարմիր լաքապատ խեցեղենի գրեթե բոլոր տեսակները, Սիրիայից, Պաղեստինից, Կիլիկիայից, Պերգամոնից, Սամոսից, Կոսից և այլ վայրերից՝ բալզամարիներն ու ամֆորիսկներն, որոնց մեջ պահում էին քսայուղեր[81] և այլն:

Ուշագրավ են ալեբաստրե սրվակները, որոնք ներմուծված են Միջագետքից (մ. թ. ա. I դ.) և Բադախշանի (Աֆղանստան) լազուրիտից պատրաստված ափսեները[82] (աղ. I, 2): Ենթադրվում է, որ վերջինս նույնպես պատրաստված է Միջագետքում[83]: Դրանցից մեկի վրա արամեերեն արձանագրություն կա, որը թերի լինելու պատճառով չի ընթերցվել: Ձևավոր պսակի վրա ութ և հատակի ռելիեֆ շրջանի մեջ երեք, շաղափված անցքերում մեխված են ոսկե գամեր: Լազուրիտը միշտ էլ բարձր է գնահատվել հին աշխարհում: Այն Արևելքի ամենահետաքրքիր քարերից է: Լազուրիտն արտահանվել է և իբրև հումք և մշակված ձևով: Գոյություն է ունեցել «Լազուրիտի մեծ ճանապարհ», ինչպես չինական մետաքսի մեծ ճանապարհը[84]: Լազուրիտի ճանապարհն անցել է նաև Հայաստանով[85]: Ըստ երևույթին, այն ձեռք բերելով Բադախշանից կամ մոտակա մի այլ հանքավայրից, հայ առևտրականների ուղտերի քարավանները, անցնելով Էկբատանով և Ատրպատականի Գանձակով Հայաստան, դրանց մի մասն իրացրել են տեղում, մյուսը վաճառել սիրակներին և առրսներին[86], որոնք այն հասցրել են Եվրոպա: Հավանաբար, դրան է վերաբերում Ստրաբոնի[87] վկայությունը, առրսների և սիրակների քարավանային առևտրով զբաղվելու մասին, որոնք հայերից ու մեդացիներից ստանում էին հնդկական և բաբելական ապրանքներ: Են-

---

[80] *Ժ. Խ ա չ ա տ ր յ ա ն. Արտաշատ, II, Անտիկ դամբարանադաշտեր, Երևան, 1981, էջ 111, Ժ. Դ. Խ ա չ ա տ ր յ ա ն, Ա. Գ. Կ ա ն ե ց յ ա ն. նշվ. աշխ., էջ 82-83, Ժ. Դ. Խ ա չ ա տ ր յ ա ն. Արտաշատի պեղումները.– ՀՍՍՀ-ում 1983-1984 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան, Զեկուցումների թեզիսներ, Երևան, 1985, էջ 32-33,* М. О. З а р д а р я н. Амфоры из раскопок Арташата.– ИФЖ, 1974, № 1, с. 266-272.

[81] М. О. З а р д а р я н. Торгово-экономические связи Армении…, с. 6-8; *Ն ո ւ յ ն ի՝* Амфоры из раскопок Арташата, с. 266-272. *Ժ. Խ ա չ ա տ ր յ ա ն. Արտաշատ, II, էջ 111-116, Ժ. Դ. Խ ա չ ա տ ր յ ա ն. Արտաշատի պեղումները.– ՀՍՍՀ-ում 1985-1986 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան, Զեկուցումների թեզիսներ, Երևան, 1987, էջ 42:*

[82] Б. Н. А р а к е л я н. Арташат I, с. 33, цв. таб. 2 б, таб XLI.

[83] М. О. З а р д а р я н. Торгово-экономические связи Армении…, с. 8-9.

[84] В. И. С а р и а н и д и. О великом лазуритовом пути на древнем Востоке.– “Краткие сообщения Института археологии”, № 114, 1968, с. 3-9.

[85] А. Е. Ф е р с м а н. Рассказы о самоцветах. М., 1974, с. 100-108.

[86] Я. М а н а н д я н. *Նշվ. աշխ., էջ 57–58:*

[87] S t r a b o, XI, V, 8.

թադրվում է, որ դա է լազուրիտը «հայկական քար» անվանելու պատճառը[88]*:*

Արտաշատի I բլրից հայտնաբերված վերոհիշյալ ափսեների լազուրիտն իր որակական հատկանիշներով նման է Բադախշանի լազուրիտին և, անկասկած, ներմուծված է այնտեղից: Առայժմ դժվար է ասել ափսեները պատրաստի վիճակում են բերվել, թե պատրաստվել են տեղում: Հայաստանում անտիկ շրջանի տեղական տարբեր քարերից պատրաստված իրեր ու առարկաներ շատ են հայտնաբերվել, այնպես որ հնարավոր էր այն տեղում պատրաստել. մանավանդ, ափսեների ձևերն իրենց զուգահեռներն ունեն խեցեղեն անոթների մեջ: Լազուրիտե ափսեները ծիսական նշանակություն են ունեցել. դրանք ծառայել են իբրև թալիսման. այն պաշտպանել է հիվանդություններից: Տվյալ դեպքում ոսկյա մեխերը «մոգական» նշանակություն են ունեցել և ավելի են ուժեղացրել լազուրիտի հատկանիշները:

Եգիպտոսի հետ քաղաքական ու առևտրական կապերի մասին են վկայում ոչ միայն կնքադրոշմները, այլև Անտոնիոսի ու Կլեոպատրա VII-ի աղջկա՝ Կլեոպատրա Սելենեի գիպսաձույլ դիմաքանդակը (մ. թ. ա. I դ. վերջին քառորդ, աղ. X, 3), Արսինոյա II-ի (մ. թ. ա. 315–270 թթ.) պատկերով ապակե կնիքը (աղ. X, 9), որը գտնվել է մ. թ. I դ. շերտից, սակայն պետք է ենթադրել, որ նույնպես ներմուծվել է մ. թ. ա. I դարի երրորդ քառորդին և այլն:

Առևտրատնտեսական կապերի մասին են վկայում նաև Արտաշատից հայտնաբերված Փոքր Ասիայից, Սիրիայից և Միջագետքից ներմուծված երկկանթանի ջնարակած անոթները, փոքր տափաշշերը, որոնք օգտագործվել են քսայուղերի համար, երկգույն ջնարակով սկիֆոսները և այլն: Եգիպտոսից, Պաղեստինից, Միջագետքից, Սիրիա-Փյունիկիայից, Փոքր Ասիայից, Կիպրոսից, Իտալիայից են ներմուծված մ. թ. ա. II – մ. թ. IV դարերի ապակյա անոթները և այլն[89]*: Ուշ անտիկ շրջանում Սիրիայից, Փոքր Ասիայից, Միջագետքից, Կիպրոսից օծանելիքներն ու քսայուղերը Հայաստան են առաքվել ապակյա սրվակներով, որոնք փոխարինել էին մետաղե և կավե սրվակներին:*

Ներմուծված նյութերի մեջ զգալի թիվ են կազմում նաև ոսկե, արծաթե և պղնձե իրերն ու զարդերը: Գեղարվեստական կացնիկները (մ. թ. ա I դ.), որոնք իշխանության խորհրդանշան էին և օգտագործվում էին հանդիսավոր արարողությունների ժամանակ (աղ. IX, 1, 2), հունական քաղաքներում հանդիպում են կլասիկ և հելլենիստական շրջանի շերտերում[90]*: Մեր կացնիկները ներմուծվել են արևմտյան Փոքր Ասիայի գեղարվեստական մետաղ արտադրող կենտրոններից մեկից: Փոքր Ասիայից ու Սիրիայից են ներմուծված ոսկյա թիթեղից պատրաստված կարոսի, սոսենու և ձիթենու տերևները*[91]*, կանացի գլխով ականջօղերը (մ. թ. ա. I դ., աղ. IX, 4) և այլն, իսկ աշտա-*

---

[88] А. Е. Ферсман. *Նշվ. աշխ., էջ 101,* К. П. Патканян. Драгоценные камни. Их названия и свойства по понятиям армян в XVII в. Ереван, 1979, с. 44-45.

[89] Ж. Д. Хачатрян. Стеклоделие в древней Армении, с. 248-258, табл. I, 1-7, 10, рис. 2; *նույնի՝* Армения и Сирия…, с. 59-66.

[90] *Տե՛ս* H. P. Francfort. Fouilles d'Aikanoum, III. Paris, 1984, s. 54–55, pl. 20,7; Г. А. Кашаленко. Родина парфян. М., 1977, рис. 52–53.

[91] *Բ. Ն. Առաքելյան. Ակնարկներ հին Հայաստանի արվեստի պատմության, Երևան, 1976, էջ*

նակի արծաթյա առևակոսներով բեկորները, ստրուկի բրոնզե դիմակը (մ. թ. ա. I – մ. թ. I դ. սկիզբ) իտալիկյան են, բրոնզե ճարմանդները (շիկղերը) Պանոնիայից և այլն:

Արտաշատի ծաղկումն ու բարգավաճումը մ. թ. ա. I դ. և հատկապես մ. թ. I – II դդ. առաջին հերթին պայմանավորված էր տարանցիկ առևտրով և այդ ապրանքների պահեստավորման վայր լինելով[92]: Տվյալ դեպքում գանձվում էր կրկնակի մաքս՝ ներմուծման և արտահանման համար[93]: Անտիկ աշխարհի հարուստ քաղաքների մեծ մասն ապրում էր տարանցիկ առևտրով[94]: Բյուզանդական կայսր Հուստինիանոս I-ի (527-565) կոդեքսում, արտացոլված 408/9 թ. կայսերական էդիկտում Պարսկաստանի հետ սահմանամերձ երեք քաղաքներում՝ Արտաշատում, Մծբինում, Կալինիկումում, միջազգային ապրանքափոխանակություն կատարելու համաձայնագրի մասին էր, որը պետք է կնքված լիներ դեռևս 166 թ. հռոմեական և պարթևական պետությունների միջև[95]: Արտաշատը արտաքին առևտրին մասնակցել է իր արհեստագործական և գյուղատնտեսական արտադրանքով: Զարգացած էր նաև ներքին առևտուրը, որը նույնպես պետության հսկողության տակ էր և քիչ եկամուտ չէր բերում: Այսպիսով, հելլենիստական և ուշ անտիկ շրջանում Արտաշատը Հայաստանի տնտեսական ու առևտրական ամենախոշոր կենտրոնն էր:

Տնտեսական կապերը նպաստում էին նաև փոխազդեցությանը արվեստի բնագավառում: Հայաստանում տեղական, ուրարտական մշակույթի հետ, իրենց կենսունակությունը շարունակում էին պահպանել նաև աքեմենյան արքունական արվեստի ավանդույթները: Այն չխանգարեց նոր, հելլենիստական մշակույթի թափանցմանը մ. թ. ա. III դ., որի ներգործությունը Արտաշիսյանների օրոք ավելի է ուժեղանում: Նոր թափ է ստանում ուրբանիզացիան: Հելլենիստական պրոցեսը տեղի էր ունենում տարբեր ճանապարհներով՝ լայնությամբ և խորությամբ, ուղղակիորեն հույն բնակչության կամ փոխանցված ձևով այլ ժողովուրդների միջոցով: Հայ թագավորները՝ Տիգրան II-ը և նրա հաջորդները, պաշտոնական հուշարձանների, դրամների վրա իրենց անվանում են «հելլենասեր» (ΦΙΛΕΛΛΗΝΟΣ), որով արտահայտված է քաղաքական ուղղվածությունը. դրանք անփոփոխ մնում են հունական՝ և լեգենդներով, և թեմատիկայով: Ա երեսին թագավորների դիմապատկերները կատարված են անտիկ ավանդույթներով, սիմվոլները Բ երեսին հունական են (Տիխե, Նիկա, Աթենաս, Հերակլես և այլն), իսկ դա չէր կարող չազդել արվեստի մյուս բնագավառների վրա:

Արտավազդ II-ը, Միհրդատ Եվպատորի, Յուբա II Մավրիտանացու, Արքելայոս Կապադովկացու նման, իր ժամանակի ամենազարգացած անձնավորություններից մեկն էր, գրում էր ողբերգություններ, ճառեր և պատմական երկեր[96]: Սոհեմոս թագավորի ժամանակ (164–186 թթ.) Արտաշատում էր ապրում գրող Յամբլիքոսը՝

22, տախտ. XXI:

[92] Я. М а н а н д я н. *Նշվ. աշխ., էջ 49, 95:*

[93] S t r a b o, XVII, I, 13.

[94] В. Т а р н. Эллинистическая цивилизация. М., 1949, с. 227-228.

[95] *ՀԺՊ, I, էջ 810:*

[96] Plut, Crass, 33.

"Babyloniaka" վեպի հեղինակը և այլն: Պարզ է, որ հելլենիստական մշակույթը և օտար բարքերը Հայաստան էին թափանցում առաջին հերթին մայրաքաղաքի միջոցով: Հռոմի բարքերը «Արտաքսատա» տանելու մասին վկայում է Յուվենալը (II, 170):

Հելլենիստական ավանդները թափանցում են նույնիսկ այնպիսի պահպանողական բնագավառներ, ինչպիսիք են թաղման ծեսերն ու կրոնը: Օտար և հայ հեղինակների վկայությամբ, Հայաստանի տաճարներում տեղական աստվածների արձանների հետ կանգնեցվել են Փոքր Ասիայից, Հունաստանից բերված հունական աստվածների արձաններ: Հայկական աստվածները ձեռք բերեցին նոր գործառույթներ, համադրվեցին հելլենիստական աստվածների հետ: Փոփոխություններ տեղի ունեցան նաև պատկերագրության մեջ: Նրանք սկսեցին պատկերվել հելլենիստական աստվածների կերպարանքով ու ատրիբուտներով:

Արտաշատում հայտնաբերվել են բարձրարվեստ մի շարք ստեղծագործություններ: Ուշագրավ է Աֆրոդիտե-Աստղիկի մարմարե արձանը[97] (գլուխը, աջ թևը և ձախը՝ արմունկից ներքև չի պահպանվել), որը թվագրվում է մ. թ. ա. II դ. – I դարի առաջին կեսով (աղ. I, 1): Այն ներմուծված է Փոքր Ասիայի արևմտյան շրջաններից և պատրաստված է «խնայողության» եղանակով Պրաքսիտելի դպրոցին պատկանող արձանների օրինակով:

Տղամարդու՝ բնական չափերից մեծ բրոնզե քանդակի մասերը, աչքի են ընկնում վարպետ գծագրությամբ, նույնիսկ մի փոքր նատուրալիզմով, որպիսին անտիկ արվեստում բնորոշ էր, մասնավորապես հռոմեական դիմաքանդակին[98]: Թվագրվում է մ. թ. ա. I դարի երկրորդ կեսով: Մոտ 1 սմ հաստությամբ բրոնզե քանդակի մասերը գտնվել են տարբեր տեղերից: Հնարավոր է՝ այն պատկերել է Անտոնիոսին, որի նկատմամբ եղած ատելությունն էլ ստիպել է արտաշատցիներին նրա մահից հետո կոտրատել արձանը:

Մանր քանդակներից մեծ հետաքրքրություն է ներկայացնում կանացի գլուխը, որը պատկերված է ըստ հունական դասական շրջանի քանդակագործության ավանդների: Շեշտված են ոչ այնքան կնոջ դեմքի մանրամասները, որքան գեղեցիկ համաչափություններն ամբողջությամբ (աղ. X, 3). կնոջ կլոր դեմքը, սեղմված քիթը և բնորոշ սանրվածքը ("Melonen Frisur"-ի ձևով) թույլ են տալիս համադրել նրան Կլեոպատրա Սելենեի[99], Մարկ Անտոնիոսի և Կլեոպատրա VII-ի դստեր հետ: Թվագրվում է մ. թ. ա. I դարի վերջին քառորդով:

Դիմապատկերի հարստությամբ և մոդելավորման նրբերանգներով աչքի է ընկնում ապակե գեման՝ Արսինոյա II Փիլադելֆոսի (մ. թ. ա. 315-270 թթ.) կիսանդրու

---

[97] *Բ. Ն. Առաքելյան. Ակնարկներ..., էջ 22–23, տախտ. XXII–XXIII, 1:* А. З. Маргарян. Скульптура древней Армении III в. до н.э. – III в. н.э. (историко-археологическое исследование).– Автореферат…, с. 12.

[98] Ж. Д. Хачатрян. Новые памятники античного искусства из Арташата.– ВОН, 1996, № 1, с. 116, рис. 1, 2, 4.

[99] О. Я. Неверов. Античные камеи в собрании Эрмитажа. Каталог. Л., 1988, № 17; O. Nevero v. Portraits hellenistiques sur Gemmes inedits. Travaux du centre d'Archeolgi Méditerranéefine de l'academie Polonaise des sciences, Tome 30, s. 3000, fig. 4.

փորագրված պատկերով (աղ. X, 9): Այն պատրաստված է մ. թ. ա. III–II դդ. Ալեքսանդրիայում՝ մեզ անհայտ վարպետի պատկանող քարե օրիգինալից[100]: Արսինոյա II-ը գեմայի վրա համադրված է Աթենասի[101] հետ, որն առայժմ միակ հայտնի օրինակն է:

Հետաքրքիր են անոթների արծաթյա կանթերը, լոտոսի ծաղկից դուրս եկող, խաղողի ողկույզը կրծքին սեղմած էրոսի (սերը գինու հետ, աղ. IX, 5) և ծովաձիուկի արձանիկները[102] (մ. թ. ա. II–I դդ.): Կանացի գլխով ոսկյա ականջօղերը պատկերում են Մենադային: Վերջինիս դիմագծերն արված են բավականին համաչափ և մանրամասն մշակված են (աղ. IX, 3): Դեմքերի կառուցվածքն ունի շեշտված հունական արտահայտություն (մ. թ. ա. I դ.):

Ուշագրավ են քարայծի արծաթյա արձանիկը, բրոնզե արծվաքանդակները[103], կանացի ոսկրե արձանիկը, որտեղ վերջինս պատկերված է երեսադեմ, կանգնած ուղիղ դիրքով (բարձր.՝ 10,6 սմ, լայն.՝ 2,5 սմ): Կինը կրծքի մոտ ձեռքերով բռնել է թաս՝ ջրային աստվածության խորհրդանիշը (աղ. X,6): Ամենայն հավանականությամբ, արձանիկը ներկայացնում է Անահիտ աստվածուհուն՝ իր տեղական, ավանդական տեսքով (III դ.): Այն արտահայտում է Հայաստանի արվեստի աղերսները պարթևական, հատկապես Միջագետքի, Տիգրիսի վրայի Սելևկիայի արվեստի հետ ոչ միայն Անահիտի պատկերագրությամբ, այլև իր ոճով (ճակատային), պատկերման եղանակով:

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում Արտաշատից հայտնաբերված կավե արձանիկները[104], որոնք հելլենիստական մշակույթի ազդեցության արգասիքն են: Դրանք հնարավորություն են տալիս ուսումնասիրել Հայաստանի արվեստի մի նոր ճյուղ՝ կորոպլաստիկան: Պաշտամունքային բնույթի այդ արձանիկները ներկայացնում են հին հայկական և հունական դիցարանի աստվածներին՝ Անահիտին (աղ. X, 8) և Միհրին (աղ. IX, 4, XI, 1), տարբեր կոմպոզիցիաներով (հեծյալ և ձեռքերը կողքերին հաղթականորեն կանթած), Աֆրոդիտե-Աստղիկին, Հերակլես-Վահագնին, Դիոնիսին, սրինգ նվագող Ատտիս-Արային, Սիլենին (աղ. X, 7), Ամուրին և այլն, և պաշտամունքային ծիսակատարությունների հետ կապված երաժիշտների՝ քնարահարների (աղ. X, 5), սազ նվագողների, ծիսական պար կատարող քրմի, ինչպես նաև դիմակներ և այլն: Այսինքն՝ այստեղ հունական և հայկական աստվածների պատկերները հանդիպում են միասին, արտահայտելով այդ շրջանի հայկական արվեստի և պաշտամունքի սինկրետիկ բնույթը:

Վերոհիշյալ կավե արձանիկները, ամենայն հավանականությամբ, Անահիտի և

---

[100] А. Б. М а н у к я н. Портретная гемма эллинистического времени из Арташата.– ВОН, 1985, № 8, с. 52–57, рис. 3–4.

[101] O. N e v e r o v. *Նշվ. աշխ., էջ 298, նկ. 1:*

[102] *Բ. Ն. Ա ռ ա ք ե լ յ ա ն. Ակնարկներ…, էջ 81, տախտ. XCVIII, 2:*

[103] *Նույն տեղում, էջ 79, 81, տախտ. XCIII–XCV, XCVI:*

[104] *Ժ. Դ. Խ ա չ ա տ ր յ ա ն. Հայաստանի անտիկ շրջանի կորոպլաստիկան.– ԼՀԳ, 1977, № 3, էջ 37-60,* Ж. Д. Х а ч а т р я н. Об античной коропластике Армении.– “Вестник древней истории”, 1979, № 3, с. 87-103.

Միհրի պաշտամունքային պաշտոնական կերպարների, մոնումենտալ քանդակների ազատ կերտված տարբերակներն են: Արվեստագետ-վարպետներն աստիճանաբար յուրացնելով հելլենիստական կորոպլաստիկայի թեմատիկան, արտահայտչամիջոցները, պատրաստման եղանակները, ստեղծեցին միանգամայն ինքնատիպ մի ուղղություն, որն աչքի է ընկնում իր տեղական առանձնահատկություններով: Հայաստանի կորոպլաստիկան զարգացման ու ծաղկման հասավ մ. թ. I–II դարերում:

Պաշտամունքային նշանակություն ունեն աչքերը (Ադ. IX, 6): Դրանցից մեկի սպիտակուցը մարմարից է, բիբը՝ բաց կանաչավուն ապակուց (երկ.՝ 2,5 սմ, լայն.՝ 1,8 սմ, բիբը՝ 1,2 սմ): Երկրորդը փղոսկրից է պատրաստված, բիբը, որը, ըստ երևույթին, եղել է ապակուց, ընկել է (2,2 X 1,4 սմ): Աչքը առասպելական խոհրդանիշ է՝ կապված աչքի հմայական զորության հավատալիքի հետ. աստված կամ դիցաբանական անձն ունի այնպիսի ունակություն, որ կարող է ինքը տեսնել ամեն ինչ, անտեսանելի մնալով: Շատ աստվածներ օժտված են այնպիսի ունակությամբ, որ նրանց սարսափեցնող հայացքին ոչ մի մահկանացու չի դիմանում: Հունական դիցաբանության մեջ դա Գորգոնան էր: Հիշենք Խորենացու (II, ԽԲ) վկայությունը, Երվանդի չար աչքի մասին, որի դեմ առավոտները արշալույսը բացվելիս որձաքար վեմեր են բռնել, և հայացքի չարությունից դրանք պայթել են: Հռոմեական շրջանի այդպիսի աչքեր հայտնաբերվել են Եգիպտոսից[105]:

Արտաշատի գեղարվեստական խեցեղենը ներկայացված է գունազարդ, ռելիեֆ զարդերով և կենդանակերպ անոթներով: Հայտնաբերվել են տարբեր կենդանիներ պատկերող պաշտամունքային անոթներ (ադ. XI, 4, 6) և արձանիկներ՝ արջեր (ադ. XI, 3, 5), եղջերուներ, ձիեր, ցուլեր, ոչխարներ, թռչուններ, որոնք պատրաստված են մեծ վարպետությամբ: Ուշագրավ է երկկանթանի կարասը, որի ուսին ցայտուն պատկերված է սրբազան որսի տեսարան՝ հեծյալը շներով հետապնդում է եղջերուներին և այծերին (մ. թ. I դ., ադ. XI, 2): Պատկերը զուրկ չէ դինամիկայից: Վերոհիշյալ գեղարվեստական խեցեղենը շարունակում է Արևելքի և Հայաստանի հնագույն ավանդները ու պաշտամունքային արարողությունների բնութագրման համար կարևոր աղբյուր է:

Հելլենիստական և հռոմեական գեղարվեստական կենցաղային իրերի ներմուծումը Հայաստան նպաստեցին անտիկ տրադիցիաների լայն տարածմանը: Վերնախավի ձգտումը շքեղության և իրենց կենցաղը գեղարվեստական իրերով շրջապատելու ցանկությունն ավելի է ուժեղանում:

Քաղաքի երեք դամբարանադաշտերի և տարբեր հատվածներում պեղված թաղումների ուսումնասիրությունը[106] լրացնում են քաղաքից հայտնաբերված նյութերի ժողովածուն և շատ կարևոր են նյութական ու հոգևոր մշակույթի, քաղաքի և քաղաքային կյանքի ուսումնասիրության համար: Դամբարանադաշտերը միմյանցից տարբերվում են թաղման որոշ ձևերով ու արարողություններով (դիակիզման, կարասների, փայտե դագաղների և կավե սարկոֆագների մեջ):

---

[105] Axel von Saldern Birgit wolte, Peter la Baume, The Elisabeth Haevernick, Gläser der Antike, Sammlung Erwin Oppen länder, Römisch-Germanisches Museum. Köln, 1975, Fig. 34-35.

[106] *Ժ. Խաչատրյան. Արտաշատ, II, էջ 31-64:*

Ուշագրավ են թաղման ծիսակատարության հետ կապված սովորությունները՝ հոգեհացի արարողության ձևերը, ծիսակատարությունների ժամանակ աղորիքներ ու երկանքներ, հեղում կատարելու համար ջրի խողովակներ օգտագործելը, հանգուցյալի հետ ձու, մարդու կավե արձանիկներ, փայտածխի կտորներ, կարոսի ոսկե տերևներից կազմված հուղարկավորության պսակ, շրթնակալ, դրամներ դնելը[107] և այլն:

Դամբարանների պեղումները հնարավորություն են տալիս ավելի լավ պատկերացում կազմելու ուշ հելլենիստական և մ. թ. առաջին դարերի թաղման ձևերի ու ծիսակատարությունների, բնակչության, նրա սոցիալական կազմի, տեղական և գաղթեցված, օտար բնակչության հնարավոր տեղաբաշխման, սովորույթների, նախասիրությունների, կապերի, ազդեցությունների ու փոխազդեցությունների զարգացման աստիճանի մասին:

Ուշ անտիկ շրջանում դեռևս շարունակվում են զարգանալ ու տարածվել հելլենիստական ավանդները: Արևելքում Հռոմը հանդես էր գալիս «հելլենիզմի փրկարարի» դերում[108] և հենվում էր հելլենիստական քաղաքների ու այդ մշակույթը կրող վերնախավի վրա: Հայաստանի այդ շրջանի մշակույթի վրա զգալի է հռոմեական մշակույթի ազդեցությունը: Դա նկատելի է առաջին հերթին քաղաքաշինության, շինարարական տեխնիկայի, ճարտարապետության և այլ ասպարեզներում[109]: Արտաշատում ճշգրտվեց փողոցների ուղղությունը, երևան եկան նոր տիպի կառույցներ, հունահռոմեական ոճի տաճարներ, հիպոկաուստով բաղնիքներ, գինի պատրաստելու ավազաններ: Բարելավվեց շաղախների որակը, առաջացան նոր տեսակի շինարարական նյութեր, կրաշաղախ և այլն:

Նորամուծություններ եղան տեխնիկայի և այլ բնագավառներում: Տեղի ունեցավ ստանդարտիզացիա (միօրինակայնացում), ինչպես շինարարական խեցեղենի, կրաշաղախե ձուլածո քիվերի ասպարեզում, զարգացավ որմնանկարչությունը և այլն: Հայաստանի մշակույթը հարստանալով անտիկ մշակույթի նվաճումներով, հասավ բարձր զարգացման՝ դրանով իսկ հիմք նախապատրաստելով միջնադարյան մշակույթի վերելքի ու ծաղկման համար:

Արտաշատը լինելով մայրաքաղաք՝ դարձավ Հայաստանի քաղաքական ու տնտեսական հզորության մարմնավորումը: Այն իր ռազմավարական դիրքի և տնտեսական բարենպաստ պայմանների շնորհիվ հինգ հարյուր տարուց ավելի պահպանեց առաջին քաղաքի դերը: Ոչ փառահեղ կառուցված Տիգրանակերտը, ոչ էլ հռոմեացիների կողմից, ի հեճուկս Արտաշատի, մայրաքաղաքի վերածված Վաղարշապատը չխամրեցրին նրա փառքը և հայ ժողովրդի կյանքում այնքան կարևոր դեր չխաղացին, ինչքան Արտաշատը:

---

[107] Ж. Д. Х а ч а т р я н. Эллинистические традиции в захоронениях и погребальных обрядах Армении.– “Проблемы античной истории и культуры”. II, Ереван, 1979, с. 427-432.

[108] Д. Ш л ю м б е р ж е. Эллинизированный Восток. М., 1985, с. 19.

[109] В. Д. Б л а в а т с к и й. Античный город.– В кн.: “Античный город”, М., 1963, с. 25; Г. А. Ц в е т а е в а. Боспор и Рим. М., 1979, с. 51, 66; *Ն. Ա. Մ ա շ կ ի ն. Հին Հռոմի պատմություն (թարգմ. Եվգ. Ա. Միրզախանյան), Երևան, 1951, էջ 739:*

2011–2012 թթ. լրանում է Արտաշատի հիմնադրման 2200 ամյակը: Համոզված ենք՝ հայկական նորանկախ պետության կառավարությունը մեծ շուքով կնշի քաղաքի հոբելյանը:

СТОЛИЦА АРТАШАТ В СВЕТЕ ИСТОРИКО-АРХЕОЛОГИЧЕСКИХ РАСКОПОК

ЖОРЕС ХАЧАТРЯН

Р е з ю м е

После битвы при Магнесии в 189 г. до н. э. Арташес (189-160 гг. до н. э.) провозгласил Великую Армению независимым государством, воссоединил армянские земли (кроме Софены), провел ряд реформ и основал столицу Арташат в 189-188 гг. до н. э. Она построена на слиянии рек Аракс и Мецамор, напротив библейского Арарата на двенадцати холмах Хор Вирапа и простирающейся к югу и востоку от них равнине. Расположенный на международных торговых путях, Арташат пережил бурный расцвет и вскоре стал крупным политико-административным, религиозным, экономическим и культурным центром не только Армении, но и превратился в один из больших и значительных городов античного мира. Начавшиеся в 1970 г. систематические раскопки выявили многообразную и развитую культуру города. Выяснилось, что арташатские холмы были заселены еще в V-IV тыс. до н. э. Совершенной неожиданностью стал обнаруженный на территории античного Арташата неизвестный до этого науке урартский город. Арташат в пору своего наивысшего расцвета и развития в I в. до н. э.–II в. н. э. вместе со своими тремя некрополями занимал территорию в 400 га и имел более чем стопятидесятитысячное население. В Арташате нашли свое отражение все передовые градостроительные и фортификационные принципы эллинистического времени. Протяженность городских стен превышала десять тысяч метров. Все холмы были вовлечены в общую оборонительную систему. Крепостные стены были в виде ломаной линии, а углы и уязвимые части укреплены мощными круглыми башнями 9-15 м. в диаметре. Застройка каждого холма была приспособлена к его рельефу и осуществлена в соответствии с предварительно начертанным планом. Расчищенные кварталы представляют собой правильную сеть регулярных улиц. Жилые здания были одно- или двухэтажными. Город имел разветвленную сеть коммунального хозяйства. Питьевая вода доставлялась по глиняным трубам из Веди. Строились частные и общественные бани римского типа. Благодаря раскопкам Арташата стало возможным изучение градостроительства, архитектуры, строительного дела эллинистического и позднеантичного периодов, тем самым заполнив пробел, существующий между урартской и раннесредневековой архитектурой. Арташат был крупным центром по переработке сельскохозяйственного и животноводческого сырья, а также ремесленным центром в целом. Были обнаружены мастерские почти всех известных тогда ремесел, инструменты и ремесленные изделия. Арташат был также центром торговли. Здесь имелись таможня и монетный двор. Обнаружены медные, серебряные и золотые армянские монеты и монеты десяти сопредельных стран. Судя по найденным буллам (более восьми тысяч), архивам и привозному материалу, город имел широкие связи со странами эллинистического мира от Индии до Рима, от Египта до областей Северного Причерноморья. Экономические связи способствовали также взаимовлияниям в сфере культуры и искусства. В Армении, наряду с местной,

урартской культурой сохранялись традиции придворного ахеменидского искусства. Они не препятствовали проникновению новой эллинистической культуры в III в. до н. э., влияние которой еще более усилилось в период Арташесидов. Арташат был олицетворением политической и экономической мощи Армении. Ни один город не сыграл столь важной роли в жизни армянского народа как Арташат.

THE CAPITAL CITY OF ARTASHAT IN THE LIGHT OF HISTORICAL-ARCHAEOLOGICAL EXCAVATIONS

ZHORES KHACHATRYAN

S u m m a r y

After the battle of Magnesia, in 189 B.C., Artashes I (189-160 B.C.) declared Great Armenia independent, reunited the Armenian lands (except for Sophene), initiated several reforms and founded Artashat in 189-188 B.C. It was built on the banks of the rivers the Araxes and the Metsamor, vis-à-vis the biblical Ararat on 12 hills of Khor Virap and the plain to the south and east of them. Situated on great international trade routes Artashat developed rapidly and soon became not only the political, religious, economic and cultural center of Armenia, but also one of the great and important cities of the antiquity. The systematic excavations since the 1970s have revealed the developed culture of the city. It turned out that the hills of Artashat had been populated since the 5th-4th millennia B.C. Furthermore, the discovery of an unknown Urartian city on the territory of Artasahat was absolutely unanticipated. Artashat, during its age of progress (the 1st century B.C. – the 2nd century A.D.) with its three burial fields occupied a territory of 400 hectares and had more than150,000 inhabitants. All the progressive principles of city and fortress planning of the Hellenistic period were refracted in Artashat. The length of the city walls was more than 10,000 m. All the hills were included into the common defensive system. The walls were built in the forms of zigzag; the corners and assailable spots were strengthened by the round towers (9-15m in diameter). Each hill was built up according to a special plan, corresponding to the relief of the area. The excavated quarters had a system of regular streets. The apartment houses were one or two-storeyed. The city had a developed communal economy. It received drinking water from the side of Vedi by large clay pipes. Private and communal baths of Roman style were built. The excavations of Artashat gave data for the study of the city planning, architecture and civil engineering, and to fill the vacuum between the architectures of Urartu and medieval Armenia. Artashat was a considerable center of agriculture and handicraft. Workhouses, tools and products of many handicrafts were discovered. Artashat was a trading center as well. It had its customs house and mint. The silver, gold and copper coins of Armenia and adjacent 10 countries were discovered. According to the data of more than 8,000 seals and imported materials Artashat had intensive connections with the Hellenistic world, from India to Rome, from Egypt to the North of the Black sea. Economic connections co-operated to the interrelationship in the field of art as well. In Armenia, together with the local traditional culture of Urartu the traditions of the Achaemenian court culture survived. They did not block the penetration of the Hellenistic culture in the 3rd century B.C., the influence of which became stronger during the reign of the Artashesids. Artashat was the embodiment of political and economic power of Armenia. No other city played such an important role in the life of Armenian people as Artashat did.